



ԻՐԱՎՈՒՆԵՐԵՐԻ ՊԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՅ ՍՆՎԱՆՆԵՐԻ ՀԿ



ԵՎՐԱՍԻԱ
ԸՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԸՆԽՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՒ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետազոտություն

Երևան 2022 թ.

Հետազոտությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը «Աջակցություն դատախրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Հետազոտության բովանդակությունը և արտահայտված տեսակետները պատկանում են միմիայն «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությանը և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Պետական Կառավարման կարգի հասկացությունն ու ընդհանուր առանձնահատկությունները.....	5
Կառավարման խորհրդարանական ձև.....	6
Կառավարման նախագահական ձև.....	8
Կառավարման կիսանախագահական ձև.....	10
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կարգը	12
1995 թվականի Սահմանադրության ընդունում	13
2005 թ-ի սահմանադրական փոփոխությունների իրականացում.....	15
2015 թվականի Սահմանադրության փոփոխություններ. անցում խորհրդարանական կառավարման կարգի.....	17
Դատական իշխանության տեղը իշխանությունների տարանջատման, զսպիչների և հակակշիռների համատեքստում	26
Դատական իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում	28
1995 թվականի Սահմանադրություն	28
2005 թվականի Սահմանադրական փոփոխություններ.....	32
2015 թվականի Սահմանադրական փոփոխություններ.....	35
Ամփոփում	43
Առաջարկություններ	45

Ներածություն

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունն անցել է սահմանադրական զարգացման փուլեր, որոնց շրջանակներում փոփոխվել են ինչպես պետության կառավարման կարգը, այնպես էլ իշխանության տարբեր ճյուղերի և ինստիտուտների հարաբերակցության և հակակշռման մեխանիզմները, լիազորությունները, ինչպես նաև դերը պետական կառավարման համակարգում: Խորհրդային կարգերի փլուզումից հետո ժողովրդավարական ուղի որդեգրած Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ էր ձևավորել սահմանադրական ինստիտուտներ, որոնք ունակ կլինեին ապահովել ժողովրդավարության և արդյունավետ պետական կառավարման համակարգի, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություն: Անցումային շրջանում գտնվող Հայաստանում Սահմանադրության և դրա փոփոխությունների շրջանակներում փոփոխվում էին պետության կառավարման կարգի, իշխանությունների տարբեր ճյուղերի միջև հարաբերակցության և զսպիչների համակարգի, դատական իշխանության անկախության ապահովման կարգավորումները, որոնք որոշ դեպքերում արմատական էին, ինչպիսիք էին 2015 թ. կատարված փոփոխությունները՝ Հայաստանի կառավարման կարգը կիսանախագահականից փոխելով խորհրդարանականի: Չնայած այդ փոփոխությունները հիմնավորվում էին իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և պետության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ¹, դրանք ուղղված էին կառավարող ուժի դիրքերի ամրապնդմանը և անսահմանափակ իշխանության ապահովմանը²:

2018 թ. իշխանափոխությունից հետո Կառավարության կողմից ընդունված ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով նախատեսվեց սահմանադրական բարեփոխումների իրականացումը³: Ռազմավարությամբ նշվել է, որ Սահմանադրությամբ⁴ առկա են մի շարք խնդրահարույց կարգավորումներ, որոնք, պայմանավորված լինելով սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գործոններով, խաթարում են իրավունքի գերակայության սկզբունքը, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորների ընտրության և խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգը, պատգամավորների թիվը, սահմանադրական մարմինների լիազորությունների տարանջատումը և հավասարակշռումը, դատական իշխանության մարմինների ձևավորման կարգը, դերը, լիազորությունները և այլն: Ռազմավարությամբ ստեղծվելիք Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ., <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumer/hayecakarg.pdf>

² Նույն տեղում:

³ ՀՀ կառավարության որոշումը Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին, թիվ 1441-Լ, 10.10.2019 թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

⁴ Նույն տեղում:

քննարկման ենթակա հարցերի շրջանակում, սակայն, ներառված չէր կառավարման կարգի փոփոխությունը, և ըստ էության սահմանադրաիրավական բոլոր կարգավորումների հարցերը քննարկվել էին կառավարման այդ մոդելի շրջանակներում: 2020 թ. փետրվարին ստեղծվեց ՀՀ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով⁵, որի գործունեությունը, սակայն, դանդաղեց՝ պայմանավորված նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ, իսկ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով հանձնաժողովի գործունեությունը կասեցվեց, չնայած ինչպես մասնագիտական հանրության, այնպես էլ կառավարող ուժի համար սահմանադրական բարեփոխումների հարցը շարունակում էր մնալ օրակարգային⁶:

2021 թ. դեկտեմբերի 17-ին մեկնարկեց Սահմանադրական բարեփոխումների նոր փուլ⁷: Ձևավորվեց սահմանադրական բարեփոխումների խորհուրդ,⁸ որի նպատակն է լինելու աուդիտի ենթարկել Սահմանադրությունը և դրա արդյունքում վերհանել խնդիրներ, որոնք ենթակա կլինեն լուծման⁹:

Սույն հետազոտության նպատակն է ՀՀ Սահմանադրության զարգացման պատմության լույսի ներքո վերլուծել Սահմանադրության գործող կարգավորումների խնդիրները՝ ՀՀ կառավարման կարգի, իշխանության ճյուղերի տարանջատման և փոխզսպման սկզբունքի, ինչպես նաև դատական իշխանության անկախության ապահովման համատեքստում:

⁵ՀՀ վարչապետի որոշումը Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը ևաշխատակարգը հաստատելու մասին, թիվ 181-Ս, 12.02.2020 թ.

⁶ ԱՐՄԵՆՊՐԵՍՍ, Սահմանադրական փոփոխությունների հարցը շարունակում է մնալ իշխանության օրակարգում, 24.03.2021 թ. <https://armenpress.am/arm/news/1047015.html>

⁷ՀՀ վարչապետի որոշում սահմանադրական բարեփոխումների խորհրդի ձևավորման գործընթաց սկսելու ևՀայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1986-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, թիվ 1442-Ս, 17.12.2021 թ.:

⁸ՀՀ վարչապետի որոշում Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու ևՀայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թ. փետրվարի 12-ի թիվ 181-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, թիվ 111-Ս որոշում, 27.01.2022 թ.

⁹ Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդրանիկ նիստ, ՀՀ արդարադատության նախարարի բացման խոսք, <https://www.facebook.com/mojarmenia/videos/96133304589232/>

Պետական Կառավարման կարգի հասկացությունն ու ընդհանուր առանձնահատկությունները

Ժողովրդավարական զարգացման ուղին որդեգրած պետությունների համար այդ գործընթացում առանցքային համարվող հարցերից մեկը պետական կառավարման կարգի ընտրության հարցն է:

Պետական կառավարման կարգի փոփոխություն առավել հաճախ տեղի է ունենում հատկապես անցումային փուլում գտնվող պետություններում, ինչը պայմանավորված է առաջ եկող օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Սա առավելապես բնորոշ է Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված նորանկախ պետություններին, որոնց առջև ծագեցին պետականակերտմանը վերաբերող մի շարք հրատապ լուծում պահանջող հարցեր, և դրա մեջ, մասնավորապես, պետական կառավարման կարգի ընտրության հարցը:

Պետական կառավարման կարգի վերաբերյալ տեսության մեջ գոյություն ունեն տարբեր ձևակերպումներ ու սահմանումներ: Որպես ընդհանրացված տարբերակ կարող ենք ասել, որ պետության կառավարման ձևը ներկայացնում է պետական իշխանության կազմակերպման եղանակն ու բարձրագույն մարմինների կարգավիճակը, վերջիններիս փոխհարաբերությունների սկզբունքները¹⁰: Առավել տարածում են գտել կառավարման նախագահական, խորհրդարանական ու կիսանախագահական ձևերը:

Այս համակարգերի էությունը և կոնկրետ երկրի համար ընտրությունը հասկանալու համար, անհրաժեշտ է պարզել ոչ միայն տվյալ երկրի արդի իրավիճակն ու ներքին գործընթացները, այլ նաև ինստիտուցիոնալ պատմությունը, կառավարման գործող կարգի տևողությունը, դրա հետևանքները և այլն: Ըստ այդմ, երկրները, որոնք անցում են կատարում նախագահականից խորհրդարանական կառավարման համակարգ կամ նոր ձևավորվող ժողովրդավարական համակարգում ներդնում են խորհրդարանական կառավարման կարգ, չպետք է կառավարման որակի մեջ արագ և էական փոփոխություններ ակնկալեն:

Յուրաքանչյուր երկրում որդեգրված կառավարման ձևի վրա ազդեցություն են գործում մի շարք հանգամանքներ՝ պատմական ավանդույթները (օրինակ՝ միապետությունը Մեծ Բրիտանիայում), ներքաղաքական պայքարի առանձնահատկությունները (օրինակ՝ պետական կառավարման ձևի բազմակի վերափոխումները Աֆրիկայի մի շարք երկրներում), հասարակության մեջ իշխող կրոնական արժեքների համակարգը (օրինակ՝ Աստվածապաշտություն) և այլն: Անդրադառնանք նշված մոդելներին առանձին-առանձին:

¹⁰Չայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ.Ընդ.խմբ.Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան. Երևան, 2010, էջ 54:

Կառավարման խորհրդարանական ձև

Խորհրդարանական կառավարման ձև ունեցող համակարգերում, որպես կանոն, միակ անմիջականորեն ընտրված կառույցը խորհրդարանն է, և կառավարությունը ձևավորվում ու վստահություն ստանում է խորհրդարանի կողմից՝ կամ խորհրդարանական մեծամասնության կողմից, կամ փոքրամասնության մասնակցությամբ և միայն ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածով¹¹: Խորհրդարանական կառավարման համակարգերում, որպես կանոն, ձևավորվում է որևէ կուսակցության մեծամասնություն, որի չձևավորման դեպքերում կոալիցիայի ձևավորումը և իշխանության կիսումը դառնում է անհրաժեշտություն¹²:

Հետևաբար, խորհրդարանական կառավարման համակարգերում էական դեր ունի *քաղաքական համակարգի և կուսակցությունների կայացվածության աստիճանը*: Վերոնշյալ հատկանիշները կյանքի կոչելը առավել քան դժվար կլինի, եթե բացակայում է կուսակցական կայացվածությունը: *Խորհրդարանական կառավարման արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է կուսակցությունների՝ պետական իշխանություն իրականացնելու ունակությամբ*:

Ինչպես ծագել է Եվրոպական Վեսթմինսթերյան համակարգերում¹³ և հետագայում զարգացել, խորհրդարանական կառավարման ձևի պարագայում խորհրդարանում ***մեծամասնությունն ունեցող կուսակցության առաջնորդը ընտրվում է վարչապետ, որն էլ ձևավորում է կառավարություն***:

Չնայած նման համակարգերում վարչապետը ավելի է նմանվում նախագահական կառավարման կարգի դեպքում գործող նախագահին՝ կուսակցական առաջնորդի մեծացող անձնավորմամբ և ընտրողների՝ կուսակցությունների ու առաջնորդների հետ նույնացմամբ, այնուհանդերձ, վարչապետին տրվող իշխանությունը սերում է խորհրդարանից:

Ինչ վերաբերում է նախագահի ինստիտուտին, ապա խորհրդարանական կառավարման կարգ ունեցող պետություններում, ի տարբերություն նախագահական ու կիսանախագահական կառավարման կարգերի, նախագահը, որպես կանոն, սահմանափակ, հաճախ՝ սիմվոլիկ գործառույթներ ու իրավասություններ ունի:

Մասնագետները նշում են, սակայն, որ ցանկացած մոդելի պարագայում առաջնային հարցը, որը պետք է առաջ քաշել, դա քաղաքական կայունության ապահովումն է: Մա իր հերթին կապվում է այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են կառավարության

¹¹ Խուան Ջ. Լինգ, Ժողովրդավարություն: Նախագահական կամ պառլամենտական, 2^{րդ} է տարբերությունը, 1985, հասանելի է անգլերենով https://pdf.usaid.gov/pdf_docs/PNABJ524.pdf կայքում:

¹² Նույն տեղում:

¹³ https://www.aph.gov.au/About Parliament/Senate/Powers_practice_n_procedures/hamer/chap02

արձագանքողականությունը քաղաքական փոփոխություններին, ընդդիմության հետ կոալիցիաների ձևավորումը, ճգնաժամային իրավիճակներում ընդդիմության արձագանքը և այլն, և այս ամենը կախված է կառավարման համակարգի նախնական ձևավորումից:

Խորհրդարանական կառավարման ձևի կողմնակիցները նշում են, որ կառավարման մեջ կարևոր խնդիր-նպատակներից մեկը կառավարման փոփոխվող պահանջներին ադապտացվելն է, և այս առնչությամբ խորհրդարանական կառավարման ձևն ավելի ճկուն և արձագանքող է, ի տարբերություն, օրինակ, նախագահական կառավարման ձևի, որն ինստիտուցիոնալ մասնատվածության պատճառով փոփոխություններին ավելի մեծ դիմադրություն ցուցաբերելու վտանգներ ունի¹⁴: Կառավարման տարբեր համակարգերի համեմատությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական կառավարման ձևն ավելի բաց համակարգ է և ի վիճակի է արտահայտել ընտրողների փոփոխվող մտեցումներն ու պահանջները՝ ըստ այդմ նաև լուծել հնարավոր բախումները: Նմանապես, բազմակուսակցականության պայմաններում խորհրդարանական կառավարման կարգն ունի կառավարման ավելի բարձր ունակություն, առկա են գործադիր իշխանությանը հեռացնելու ավելի պարզ մեխանիզմներ, ռազմական հեղաշրջումների հավանականությունը ավելի քիչ է:

Պետք է նշել, սակայն, որ խորհրդարանական կառավարման ձևը նույնպես կարող է ճգնաժամային իրավիճակի տանել: Օրինակ, երբ կայանում են ընտրություններ, սակայն մաքուր մեծամասնություն պառլամենտում չի ձևավորվում, ձևավորված կառավարությունը օրենսդիր մարմնից վստահություն չի ստանում, ավելին, կարող է բախվել անվստահության քվեի, ինչից հետո ձևավորված նոր կառավարությունը կրկին կարող է բախվել նույն խնդիրներին: Նմանապես, հնարավոր է նոր ընտրությունների անցկացում, սակայն կայուն մեծամասնության ձևավորման ընտրված կուսակցությունները այդպես էլ չհասնեն, ինչն ընդհանուր առմամբ բացասական է անդրադառնում պետության կառավարման վրա և կարող է հանգեցնել կառավարման տապալման:

Խորհրդարանական կառավարման կարգի արդյունավետությունը երբեմն կապվում է նաև տվյալ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի հետ: Մասնավորապես, կա մոտեցում, համաձայն որի ինչքան ցածր է երկրում մեկ շնչին ընկնող եկամուտը, այնքան մեծ է կառավարման այս մոդելի ձախողման հավանականությունը, քանի որ աղքատ երկրներում ժողովրդավարությունը ավելի մեծ ռիսկերի է հանդիպում¹⁵: Առավել հաջողված խորհրդարանական երկրները առավելապես հանդիպում են առավել հարուստ երկրներում,

¹⁴ Ջ.Գերինգ, Ս. Թաքեր, Ք. Մորենո, Արդյո՞ք պառլամենտական համակարգերն ավելի լավն են, 2008, հասանելի է անգլերենով <https://journals.sagepub.com/doi/10.1177/0010414008325573> կայքում:

¹⁵ Ջ. Քեիբաբ, Կառավարման համակարգեր. Պառլամենտատակն և նախագահական: Հասանելի է անգլերենով http://ella.practicalaction.org/wp-content/uploads/learning/contribution_materials/lea55/Cheibub_Presidential%20and%20Parliamentary%20Systems1465884839.pdf կայքում:

մինչդեռ, օրինակ, նախագահական կառավարումը կապվում է առավել քիչ զարգացած երկրների հետ, որտեղ առկա են նաև եկամտի մեծ խնդիրներ¹⁶:

Կառավարման նախագահական ձև

Նախագահական կառավարման ձևի հիմնական բնորոշիչն այն է, որ երկրի կառավարման և կառավարության ղեկավարն է նախագահը, ով ընտրվում է ուղղակի և համընդհանուր ընտրություններով, և իրավունք ունի վետո դնել խորհրդարանի որոշումների ու օրենքների վրա¹⁷: Նախագահական կառավարման ձևի պարագայում կառավարությունը ձևավորվում է նախագահի կողմից և նախագահը հանդիսանում է կառավարության ղեկավարը:

Ըստ տեսաբանների՝ ի տարբերություն խորհրդարանական կառավարման ձևի, որտեղ կոալիցիաների ձևավորումն ու ճգնաժամային իրավիճակների հաղթահարումը ավելի հեշտ է՝ նախագահական կառավարման ձևի դեպքում հազվադեպ են քաղաքական կոալիցիաները, քանի որ բացակայում են առանձին քաղաքական խմբերի համագործակցության հիմքերն ու խթանիչները: Ինքնին, նախագահական կառավարման ձևը բավարար պայմաններ չի ստեղծում և վերջինիս տրամաբանությունից չի էլ բխում կուսակցությունների համագործակցությունը¹⁸:

Լրիվ հակառակ մոտեցումն է խորհրդարանական կառավարման մոդելում, որտեղ օրենսդիրն ու գործադիրը հեշտությամբ են համաձայնության գալիս, իսկ կուսակցությունների կոալիցիաները բխում են այդ մոդելի տրամաբանությունից: Իհարկե սա բոլոր պետություններում միանշանակ չի գործում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, կապված է կուսակցությունների կայացվածության մակարդակից: Եվ եթե վերջինս բացակայում է, հնարավոր են կառավարման ոչ արդյունավետ և նույնիսկ ճգնաժամային իրավիճակներ:

Նախագահական կառավարման կարգի առնչությամբ տեսության մեջ շրջանառվում է նաև կարծիք, որ նախագահական մոդելը անհամատեղելի է բազմակուսակցական համակարգի հետ¹⁹: Այս առնչությամբ պետք է նշել, սակայն, որ կուսակցությունների փոքրաթիվության դեպքում նման մոդելը արագ կվերածվի ավտորիտար համակարգի²⁰: Ուսումնասիրությունները փաստում են, որ նախագահական կառավարման կարգն ավելի

¹⁶Տ Հիրոի, Ս. Օսոի, Պառլամենտարիզմի վտանգները՝ Վերանայելով քաղաքական համակարգերը և ժողովրդավարության կայությունը: Հասանելի է https://www.researchgate.net/publication/232826451_Perils_of_Parliamentarism_Political_Systems_and_the_Stability_of_Democracy_Revisited կայքում:

¹⁷Ջ. Ցեբելիս, Քաղաքական համակարգերում որոշումների կայացումը: Վետոյի իրավունքը նախագահական, պառլամենտական, բազմապալատական, բազմակուսակցական համակարգերում, 1995, հասանելի է [անգլերենով https://sites.lsa.umich.edu/tsebelis/wp-content/uploads/sites/246/2015/03/decision_making_in_political_systems_1995_bjps.pdf](https://sites.lsa.umich.edu/tsebelis/wp-content/uploads/sites/246/2015/03/decision_making_in_political_systems_1995_bjps.pdf) կայքում:

¹⁸Նույն տեղում:

¹⁹ Ջ. Քեյբաբ, Կառավարման համակարգեր. Պառլամենտական և նախագահական: Հասանելի է [անգլերենով http://ella.practicalaction.org/wp-content/uploads/learning/contribution_materials/lea55/Cheibub_Presidential%20and%20Parliamentary%20Systems1465884839.pdf](http://ella.practicalaction.org/wp-content/uploads/learning/contribution_materials/lea55/Cheibub_Presidential%20and%20Parliamentary%20Systems1465884839.pdf) կայքում:

²⁰Նույն տեղում:

շատ հանդիպել է այն երկրներում, որտեղ զինվորականները մեծ պոստենցիալ և հնարավորություն են ունեցել քաղաքականության մեջ հայտնվելու համար: Հետևաբար, նախագահական կառավարման տապալման հիմնական պատճառներից մեկը ոչ թե ընտրված մոդելն է, այլ այն, որ հասարակությունը և միջավայրը, որտեղ այն ձևավորվել է, դեռևս խնդիրներ ունի ժողովրդավարության հաստատման համար և այն հավանական է, որ տապալվի²¹:

Միաժամանակ, կառավարման նախագահական կարգի պայմաններում առկա է սահմանադրական մարմինների գործունեության և կառավարման ժամկետի կոնկրետություն, ինչը նաև որոշակի կանխատեսելիություն է տալիս և ըստ այդմ նաև կայունություն²²: Ի տարբերություն խորհրդարանական կառավարման, որտեղ կառավարության գործունեության ֆիքսված ժամկետներ չկան, ինչով պայմանավորված կառավարության ոչ կայուն լինելը կարող է հանգեցնել ճգնաժամային իրավիճակների ու հավելյալ միջոցառումներ պահանջել, ընդհուպ սահմանադրական, ճգնաժամը հաղթահարելու համար, նախագահական կառավարման ձևը ուղեկցվում է կառավարության գործունեության հստակ ժամկետներով:

Չպետք է մոռանալ նաև նախագահի ընտրության հարցում ընտրողների ուղիղ ընտրական իրավունքի ապահովման մասին, որը լավագույնս ապահովվում է նախագահական կառավարման կարգի դեպքում: Այստեղ ընտրողները ուղիղ և ֆիքսված ժամկետով ընտրում են նախագահին, ի տարբերություն խորհրդարանական կառավարման ձևի, որի պարագայում նախագահի ընտրությունն իրականացվում է, որպես կանոն, խորհրդարանի կողմից: Յուրաքանչյուր պարագայում, հաջողված նախագահական կառավարման մոդել ունենալու համար պետք է ուշադրություն դարձնել այնպիսի հանգամանքների վրա, ինչպիսիք են նախագահի օրենսդրական լիազորությունները, օրենսդիր մարմնի ու նախագահի ընտրության կարգավորումները, նախագահական ընտրությունների սահմանադրական ժամկետները և այլն: Նախագահի օրենսդրական լիազորությունների մեջ առաջին հերթին ուշադրություն դարձվում է վետոյի իրավունքի առկայությանը, ինչը կարող է լինել մասնակի և ամբողջական: Նմանապես, նախագահը կարող է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու բացառիկ իրավունք ունենալ:

Նախագահական կառավարման ձևի հաջողությունը մեծապես կախված է տվյալ համակարգի ինստիտուցիոնալ դասավորվածություններից: Օրինակ, ուժեղ նախագահի ինստիտուտը ոչ ցանկալի է, քանզի դա կարող է օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև հակամարտության հանգեցնել: Յանկալի է ստեղծել մրցակցային և նախագահական ընտրություններ պաշտոնավարման կոնկրետ ժամկետներով և վերընտրման սահմանափակումներով: Քանզի միանշանակ մոտեցում չէ, որ նախագահական կառավարումը նվազեցնում է ժողովրդավարության զարգացման հնարավորությունները, իսկ դա կանխելու համար անհրաժեշտ է ճիշտ նախագծել նախագահի լիազորությունների

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

շրջանակը, ընտրական համակարգն ու հարաբերակցությունը օրենսդիր ու գործադիր մարմինների հետ:

Կառավարման կիսանախագահական ձև

Կիսանախագահական կառավարման համակարգը ներառում է ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական կառավարման ձևերին բնորոշ տարրեր: Նախագահն այստեղ իր պաշտոնը զբաղեցնում է ուղղակի և համընդհանուր ընտրությունների միջոցով և որպես պետության գլուխ՝ ստանում է բավականին մեծ իրավասություններ: Սակայն այս մոդելի պարագայում գործադիր իշխանությունը պատկանում է կամ այն կիսվում է վարչապետի գլխավորությամբ գործող կառավարության հետ: Չնայած նախագահը մեծ դեր ունի կառավարության կազմավորման գործում, սակայն ստիպված է այդ գործընթացում համագործակցել խորհրդարանական մեծամասնության հետ և հաշվի առնել մեծամասնության կարծիքը: Կառավարության անվստահություն հայտնելը հանգեցնում է վերջինիս հրաժարականին կամ նախագահի կողմից խորհրդարանը արձակելուն:

Ի տարբերություն պառլամենտարիզմի, որի հաջողությունն ու արդյունավետությունը ուղղակիորեն կապված է կուսակցությունների՝ պետական իշխանություն իրականացնելու ունակությամբ, կիսանախագահական կառավարումը էապես կապված է նախագահ-կառավարություն հարաբերություններից, ինչը առավել ճկուն և փոփոխվող կարող է լինել:

Կիսանախագահական կառավարման ձևի առավելությունները, ըստ տեսաբանների, ներառում են ավելի բարձր կայունություն հասկապես անցումային փուլերում, առավել արդյունավետություն՝ պառլամենտական հստակ մեծամասնության բացակայության պարագայում, և պառլամենտարիզմի պարագայում այդ առավելությունների բացակայությունը ներկայացնում որպես թերություն²³:

Չուգահեռաբար, սակայն, պառլամենտարիզմի արդյունավետության ներքոնշյալ ռիսկերն ու կասկածները ներկայացվում են որպես կիսանախագահական մոդելի օգտին խոսող գործոններ, օրինակ՝

- Քաղաքական կուսակցությունների որակի և քանակի խնդիրներ պառլամենտարիզմի պարագայում, ինչը կխոչընդոտի կուսակցական կոալիցիա և կայուն ժողովրդավարություն ձևավորելուն: Նման խնդիր չի հանդիպում կիսանախագահական կարգերում, քանզի կոալիցիաների ձևավորումը առաջնային նպատակ չէ,
- Նմանապես, քաղաքական ընդդիմության ձևական դերակատարում, ինչը պառլամենտարիզմի ձախողում է,
- Քաղաքական կուսակցությունների սոցիալական համագործակցության բացակայություն, փոխարենը անարխիկ ազդակների դրսևորում,

²³ Նույն տեղում:

- Օրենսդրական գործունեության հեշտացում, սակայն վետոյի և հակադարձման բացակայություն:

Միանշանակ ընդունելի չէ նաև հաջողված և անհաջող երկրների փորձերի մատնանշումը՝ կառավարման կոնկրետ մոդելի ընտրությունը հիմնավորելիս: Քանի որ, ինչպես արդեն ներկայացվել է, հաջողված կառավարման ձևը կախված է մի շարք հանգամանքներից ու սովյալ երկրի քաղաքական ու ինստիտուցիոնալ միջավայրից: Օրինակ, նացիստական Գերմանիայի և հետպատերազմյան Ֆրանսիայի, Իտալիայի և այլ պետությունների փորձը ցույց է տալիս, որ պառլամենտարիզմը կարող է հանգեցնել կամ ավտորիտարիզմի հաստատման կամ կառավարման ճգնաժամի:

Կիսանախագահական կառավարման մոդելի լավագույն օրինակ է Ֆրանսիայի հինգերորդ հանրապետությունը: Վերջինիս կայացման և գործառնության փորձը ցույց է տալիս պետության գոյատևման ներքաղաքական և արտաքին քաղաքական գործոններին համապատասխանող կառավարման ձևի ընտրության կարևորությունը, ինչով բացատրվում է նաև Ֆրանսիական պետության հետագա զարգացումն ու քաղաքական կայունացումը:

Կիսանախագահական կառավարման կարգի դրական հատկանիշները առավել լավ դրսևորվում են **անցումային պետությունների պարագայում, հատկապես դեռևս չկայացած քաղաքական համակարգերում**, որտեղ նախագահը կարող է կայունացնող դեր ստանձնել:

Միննույն ժամանակ, սակայն, պետք է ընդունել, որ կառավարման ցանկացած ձևի արդյունավետությունը և ներուժի դրսևորումը, անկախ տեսական ուսումնասիրություններից և երկրների փորձից, կախված է սովյալ երկրի քաղաքական ուժերի հարաբերակցությունից, կառավարման ռեժիմից, քաղաքական մշակույթից ու հասարակական իրավագիտակցության զարգացման մակարդակից:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կարգը

Խորհրդային կարգերի փլուզումից հետո հետխորհրդային երկրների քաղաքական պատմությունը քաղաքական ռեժիմի վերափոխումների նոր գործընթաց էր: 1990 թվականից ի վեր հետխորհրդային ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ անցում կատարեցին դեպի ժողովրդավարության երրորդ փուլ/ալիք²⁴: Երկրների մի մասը գնաց կիսանախագահական կառավարման ձևի հաստատման ուղով²⁵: Հայաստանի Հանրապետությունը այդ երկրների շարքին էր դասվում:

Հետխորհրդային երկրները, ներառյալ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, մտան սահմանադրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների մի նոր շրջան, որում կառավարման կարգի ընտրությունը կենտրոնական դեր և նշանակություն ստացավ: Ինչպես արդեն ներկայացվեց վերևում, անցումային շրջանում մնացած երկրների համար հատկապես այս հարցը մինչ օրս կենտրոնական նշանակություն ունի: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետությունը 30 տարիների ընթացքում փորձարկել է գոյություն ունեցող բոլոր մոդելները և դեռևս ընթանում են քննարկումներ առավել արդյունավետ գործող կառավարման մոդել որդեգրելու ուղղությամբ:

Պետք է նշել, սակայն, որ որոշ հետխորհրդային երկրներ կարողացել են անցնել տրանսֆորմացիայի փուլն ու մտնել քաղաքական համակարգի զարգացման շրջան, որոշ երկրներ դեռևս շարունակում են անցումային շրջանում մնալ՝ փորձելով կայուն ժողովրդավարություն հաստատել, այդ թվում՝ նաև անցում կատարելով մի համակարգից մյուսը և հետ, ինչպես նաև փոփոխելով իշխանության ճյուղերի միջև իրավասությունների, զսպումներն ու հակակշիռները բաշխումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի զարգացումը սկսվեց 1990-ականների սկզբից, ինչն ընթացավ կառավարման կոնկրետ ձևի ընտրության հարցով, և առանձնակի կարևորություն ստացավ ՀՀ Անկախության հռչակումից հետո: Այս համատեքստում կարևորագույն հարցեր դիտարկվեցին օրենսդիր ու գործադիր մարմինների գործառնությունների հարաբերակցումը, զսպումներն ու հակակշիռները:

²⁴ Պատմականորեն գոյություն ունեն ժողովրդավարության անցման երեք փուլեր: Ինչպես ներկայացնում է քաղաքագետ Սամուել Հանթինգտոնը, առաջին ալիքը ընթացել է դանդաղ և սկսվել 19-րդ դարում, երկրորդ ալիքը ձևավորվել է Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, իսկ երրորդը սկիզբ առավ 1970-ականներին Եվրոպայում և շարունակվեց Լատինական Ամերիկայում ու Ասիայում: Մի շարք գիտնականներ Խորհրդային համակարգի փլուզումից հետո պետությունների 1989-1991 թթ քաղաքական համակարգերի փոփոխությունները ներառում են ժողովրդավարության երրորդ ալիքի մեջ:

²⁵ Է. Ռոբերտ, Կիսանախագահական քաղաքականությունը: Հասանելի է անգլերենով https://www.researchgate.net/publication/265101267_The_Politics_of_Semi-Presidentialism/link/5448d9240cf22b3c14e33625/download կայքում:

ՀՀ կառավարման կարգի անցած ճանապարհն ու ապագայի միտումները պատկերացնելու համար ստորև հակիրճ ներկայացնում ենք անկախացումից հետո ընտրած կառավարման կոնկրետ կարգի առանձնահատկությունները, օրենսդրական ամրագրումներն ու ձախողումների հնարավոր պատճառները՝ ապագային միտված առավել արդյունավետ որոշումներ կայացնելու նպատակով:

1995 թվականի Սահմանադրության ընդունում

1990 թվականին Հայաստանում ստեղծվեց Սահմանադրական հանձնաժողով, որը սակայն իր աշխատանքները սկսեց երկու տարի անց: Այդ ընթացքում այնուհանդերձ որոշ օրենսդրական փոփոխություններ տեղի ունեցան: Մասնավորապես, 1991 թվականին ներդրվեց նախագահի պաշտոնը, ինչից հետո կայացան նաև առաջին նախագահական ընտրությունները: Սրան հաջորդեց այն հարցի որոշումը, թե լիազորությունների ինչ ծավալ պետք է տրվի նախագահին՝ գործադիր ու օրենսդիր իշխանությունների համատեքստում:

Լայն լիազորություններով օժտված խորհրդարանի կողմնակիցները նշում էին, որ ուժեղ խորհրդարանը ժողովրդավարության երաշխիք է և կանխում է մի անձի ձեռքում իշխանության կենտրոնացումը: Նմանապես, նշվում էր, որ խորհրդարանական կառավարման ձևը դրական ազդեցություն ունի քաղաքական կուսակցությունների ստեղծման գործում, ինչը պրակտիկորեն և տեսականորեն ապացուցված երևույթ էր²⁶:

Ձուգահեռաբար, ուժեղ նախագահական ինստիտուտի կողմնակիցները նշում էին, որ ոչ-պրոֆեսիոնալ խորհրդարանն ու չկայացած կուսակցությունները տանում են քաղաքական ճգնաժամի, ինչի վերջնակետը բռնապետությունն է: Վերջիններս առաջարկում էին այնպիսի համակարգ ստեղծել, որի պարագայում իշխանության թևերը կենթարկվեն ուժեղ նախագահի ինստիտուտին:

Երկու մոտեցումներն էլ հաշվի առնվեցին, երբ հետագայում մշակվում էին Նախագահի մասին և Գերագույն Խորհրդի մասին օրենքները: Վերջիններս ընդունվելուց հետո Հայաստանը իրական քայլեր ձեռնարկեց քաղաքական համակարգ ստեղծելու ուղղությամբ:

1990 թվականին ընդունվեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը, որի համաձայն՝ «Մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք

²⁶ Ջ. Քեյբար, Կառավարման համակարգեր. Պառլամենտատակն և նախագահական: Հասանելի է անգլերենով http://ella.practicalaction.org/wp-content/uploads/learning/contribution_materials/lea55/Cheibub_Presidential%20and%20Parliamentary%20Systems1465884839.pdf կայքում:

հակասում են «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»²⁷:

Այս օրենքի ընդունումից հետո արդեն իրական իրավական հիմքեր ստեղծվեցին պետական կառավարման մոդելի հիմքերը նախանշելու համար: Կարևոր քայլ էր նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» ՀՀ օրենքի վերջնական ընդունումը, որով սահմանվեց պետության ղեկավարի պաշտոնն ու իրավական կարգավիճակը: Սակայն ամենից վեր, վերոնշյալ օրենքի ընդունմամբ սկսվեց ՀՀ կառավարման նոր, խառը համակարգի ձևավորումը, որը ներառում էր խորհրդային, նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերի տարրեր:

«Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» ՀՀ օրենքով (Նախագահի մասին օրենք) սահմանվում էր, որ Նախագահը Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է Հանրապետության գործադիր իշխանությունը, ինչը կառավարման նախագահական մոդելի բնորոշ հանգամանք է: Նախագահի մասին օրենքի համաձայն՝ նախագահն ընտրվում էր համապետական մեծամասնական ընտրական համակարգով՝ 5 տարի ժամկետով: Նախագահը երկրի ղեկավարն ու գործադիր իշխանության գլուխն էր: Նախագահը նշանակում էր վարչապետին և վերջինիս խորհրդով նշանակում էր նախարարներին: Նախագահի լիազորությունների առնչությամբ սահմանված էին «հիբրիդային» կարգավորումներ, մասնավորապես՝ նախագահ-կառավարություն, նախագահ-խորհրդարան, խորհրդարան-կառավարություն հարաբերություններում: Օրինակ, համաձայն կարգավորումների, կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում Գերագույն խորհրդի առաջ: Գերագույն խորհուրդը պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ Հանրապետության նախագահին կարող էր առաջարկել վերանայել կառավարության, դրա ղեկավարի կամ որևէ անդամի նշանակման հարցը: Զուգահեռաբար, սակայն Հանրապետության Նախագահը օժտված չէր խորհրդարանն արձակելու լիազորությամբ:

Ինչ վերաբերում է օրենսդիր իշխանությանը, օրենքների ընդունումը վերապահված էր Գերագույն խորհրդին, նմանապես սահմանադրական փոփոխությունները, վերջինս իրավասու էր նաև անվստահություն հայտնել կառավարությանը՝ ձայների որակյալ մեծամասնությամբ: Օրենքները ներկայացվում էին նախագահի հաստատմանը, ով կարող էր կամ ստորագրել ու հաստատել, կամ վետո դնել և հետ ուղարկել դրանք:

Նախագահի և Գերագույն խորհրդի մասին ՀՀ օրենքների ընդունումից հետո անհրաժեշտություն առաջացավ ընդունել հիմնարար օրենք, ըստ այդմ ընթացք տրվեց Սահմանադրության մշակմանը:

²⁷ Արթուր Վաղարշյան, Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991թթ. հասանելի է http://ysu.am/files/01A_Vagharshyan-1450343348-.pdf կայքում:

1995 թ-ի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Համաձայն Սահմանադրության՝ երկրի նախագահը պատասխանատու էր սահմանադրության պահպանման և իշխանության թևերի գործունեության համար: Այս ընթացքում կառավարման ձևը համարվում էր կիսանախագահական, սակայն 1995-1997 թթ քաղաքական իրականությունը ավելի մոտ էր սուպեր-նախագահականին՝ նախագահին տրված լայն գործառնությունների ու լիազորությունների շնորհիվ²⁸:

Այս փուլում գործող Սահմանադրությունը թեպետև մեծ ձեռքբերում էր, սակայն մի շարք բացեր ուներ: Մասնավորապես, բացակայում էր հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի, սահմանադրորեն ճանաչման ու ամրագրման նկատմամբ: Իրացված չէր նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, հստակ չէին Հանրապետության նախագահի ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, պատասխանատվության շրջանակները՝ գործադիր իշխանության ոլորտում, որոշակիացման կարիք ուներ նաև վարչապետի ինստիտուտի տեղն ու դերը գործադիր իշխանության համակարգում: Անհրաժեշտ չափով գործուն չէին Ազգային ժողովի արդյունավետ օրինաստեղծ աշխատանքն ու վերահսկիչ դերն ապահովող սահմանադրական նախադրյալները: Այս խնդրի լուծումը հնարավոր էր սահմանադրական բարեփոխումների արդյունքում, մասնավորապես, Ազգային ժողովին վերապահելով ստանձնած քաղաքական պատասխանատվությունն իրականացնելու գործում առավել մեծ ինքնուրույնություն, հաղթահարելով Ազգային ժողովը լուծարելու՝ Հանրապետության Նախագահի գրեթե բացարձակ հայեցողական իրավունքը, ուժեղացնելով իշխանության այլ թևերի գործառնության լիազորությունների նկատմամբ Ազգային ժողովի հակակշռող ներազդեցությունը²⁹:

2005 թ-ի սահմանադրական փոփոխությունների իրականացում

2005 թ. գործող խորհրդարանական կոալիցիայի կողմից նախապատրաստվեց սահմանադրական փոփոխությունների նախագիծ, որն ընդունվեց 2005 թ.-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեով:

2005 թ. սահմանադրական փոփոխություններով տեղի ունեցավ կառավարման մոդելի կատարելագործում՝ կիսանախագահական կառավարման ձևի շրջանակներում: Փորձ արվեց ստեղծել ավելի բալանսավորված համակարգ և հորիզոնական հաշվետվողականության հնարավորություններ: Հստակեցում ստացավ հանրապետության նախագահի ու Ազգային ժողովի համատեղ որոշումների կայացման ոլորտներն ու իրավասությունների շրջանակը:

²⁸ Ա. Մարկարով, Կիսանախագահական կառավարման կարգտ հետխորհրդային տրանսֆորմացիայի համատեքստում, 2008:

²⁹ ՀՀ Սահմանադրական Բարեփոխումների հայեցակարգ, Առաջին փուլ /1995-2005 թթ/, Մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, 2014 թ.

Մինչ 2005 թ. սահմանադրական փոփոխությունները Ազգային ժողովի կողմից նշանակվում էին միայն կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը՝ Նախագահի առաջարկությամբ: Սահմանադրական փոփոխություններից հետո նման ընթացակարգը գործեց վերահսկիչ պալատի նախագահի, կենտրոնական բանկի նախագահի ու վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնների համար:

Համաձայն փոփոխությունների՝ խորհրդարանը ակտիվ դեր է խաղում կառավարության ձևավորման գործում, ավելին, վարչապետի ընտրության հարցում նախագահը պահում էր այն անձի թեկնածությունը, ով ներկայացվել է պատգամավորների մեծամասնության կողմից:

Նմանապես նախատեսված էին կարգավորումներ և հստակեցումներ ուղղված ներքին քաղաքականության մշակման նիրականացման ոլորտում կառավարության և վարչապետի՝ Նախագահի նկատմամբ ինքնուրույնության աստիճանի բարձրացմամբ: Նոր կարգավորումներով նախագահի լիազորությունները մասամբ կրճատվեցին: Մասնավորապես, վերջինս չէր կարող վարչապետին պաշտոնից հեռացնել, իսկ խորհրդարանի լուծարումը հնարավոր էր միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում, կառավարության նիստերը հրավիրում և վարում էր ոչ թե Հանրապետության Նախագահը, այլ վարչապետը: Հանրապետության նախագահը կարող է հրավիրել և վարել միայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ: Փոփոխություններով վերացվեց Նախագահի՝ կառավարության որոշումները վավերացնելու լիազորությունը: Փոխարենը ամրագրվեց Նախագահի լիազորությունը՝ կասեցնելու կառավարության որոշումները մինչև մեկ ամիս ժամկետով և դիմելու սահմանադրական դատարան՝ սահմանադրականության հարցը որոշելու համար:

Նախագահը, ըստ կարգավորումների, իրավասու էր նշանակել և պաշտոնից հեռացնել դատավորներին, գլխավոր դատախազին: Ինչը կարևոր դերակատարում էր տալիս նախագահի ինստիտուտին:

Նախագահի դերը փաստորեն բալանսավորվում էր խորհրդարանին և կառավարությանը տրված լիազորություններով, եթե ոչ պրակտիկայում, համենայն դեպս տեսականորեն նման հնարավորություններ սահմանված էին:

Պրակտիկայում, սակայն, այնպիսի գործոններ, ինչպիսիք էին կուսակցական կայացած համակարգի բացակայությունը, ժողովրդավարության, քաղաքական ու իրավական մշակույթի բացերը գործնականում հանրապետության նախագահին լայն հնարավորություններ էին տալիս ազդել իշխանության բոլոր երեք թևերի ձևավորման ու գործունեության վրա:

2015 թվականի Սահմանադրության փոփոխություններ. անցում խորհրդարանական կառավարման կարգի

2013 թ.-ից ՀՀ-ում սկսվեց սահմանադրական փոփոխությունների հերթական փուլը, որը մեկնարկեց 2013 թ. սեպտեմբերի 4-ին հանրապետության Նախագահի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանագրով³⁰: Հանձնաժողովի կողմից ներկայացված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով Հայաստանի կառավարման կարգի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորվում էր Սահմանադրական մակարդակում «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում անհրաժեշտ ներդաշնակության երաշխավորման բացակայությամբ, առանց որի չի կարող ապահովվել նաև գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների ցանկալի հավասարակշռություն: Վերջինիս բացակայությունը մեծապես վտանգում է երկրի կայուն զարգացումը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվ հայեցողության շրջանակների վտանգավոր ընդլայնման: Հայեցակարգային առումով առկա խնդիրներից հատկապես առանձնացվում էին հետևյալները. Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ոչ միաժամանակյա ընտրությունների պարագայում առաջնային մանդատ ունեցող երկու ինստիտուտները հայտնվում են հանրային վստահության տարբեր մակարդակներում և խորհրդարանում Հանրապետության Նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում ու իրավամտաձողության ներկա դրսևորումների համատեքստում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը: Ինչպես նշվում էր հայեցակարգը մշակողների կողմից՝ նման պայմաններում քաղաքական դիմակայությունը կարող է վերաճել հանրային առճակատման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ³¹:

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով Հայաստանն անցում կատարեց խորհրդարանական կառավարման կարգի՝ նախատեսելով կայուն մեծամասնությամբ խորհրդարան և անցում միայն համամասնական ընտրակարգի:

Մասնավորապես, ընդունված փոփոխություններով Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝

1. *Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:*

³⁰ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին», ՆՀ-207-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91086>

³¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների Հայեցակարգ, 2014 թ. հասանելի է <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf> կայքում:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:
3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Այսպես, Սահմանադրության 89-րդ հոդվածի կարգավորումները ձևավորում են կայուն մեծամասնությամբ Ազգային ժողով՝ առանց սահմանելու պատգամավորների հստակ թվաքանակը, այլ հնարավոր նվազագույն թիվը: Կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման սկզբունքները ու կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Դեռևս Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ ներկայացված նախնական կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ նման կարգավորմամբ պատգամավորների ընդհանուր քանակը կախված է լինելու մեծամասնությանը որպես բռնուս հատկացված լրացուցիչ տեղերի քանակից³²: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե որևէ կուսակցություն ստանում է [...] բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն մանդատներ, որ արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը:³³

Միաժամանակ, ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ «եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5/7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:³⁴ Այս կարգավորումների պրակտիկ դրսևորումը եղան 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքները:³⁵

³² Վենետիկի հանձնաժողով, նախնական կարծիք, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, հասանելի է [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=C DL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=C DL-PI(2015)015rev-arm) կայքում:

³³ ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 96, մաս 1-ին:

³⁴ ՀՀ ընտրական օրենսգիրք, 95-րդ հոդված, 4-րդ մաս:

³⁵ Իրավաբան, Ազգային ժողովում 3 քաղաքական ուժերից յուրաքանչյուրը քանի մանդատ կստանա. ԱԺ-ն կունենա 107 պատգամավոր, <https://iravaban.net/337934.html>

Սահմանադրական փոփոխություններով Ազգային ժողովն ստացավ լիազորություններ ձևավորելու իշխանության այլ ճյուղերի մարմինների, սակայն այս որոշումներում էական դերակատարում էր ստանում Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը՝ կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը:

Սահմանադրությունը նախատեսում է մասնավորապես, որ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին³⁶: Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով³⁷:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի գործունեության ուսումնասիրությունը փաստում է, որ ինչպես առանձին օրենքների քննարկման ժամանակ, այնպես էլ սահմանադրական մարմինների ընտրություններում Ազգային ժողովի փոքրամասնությունը առանձնակի դերակատարում և ազդեցություն արդյունքների վրա չի ունենում, քանի որ վերոնշյալ դեպքերում կայուն խորհրդարանական մեծամասնություն համարվող ուժը ունի ձայների բավարար քանակ որոշումներն ընդունելու համար:

Ասվածի օրինակ են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի փոփոխությունները, Քովիդ-19 համավարակով պայմանավորված առանձին օրենսդրական փոփոխությունների ընդունումը, պետական մարմինների ձևավորումը, ինչպիսիք են Կենտրոնական բանկի նախագահի ընտրությունը 2020 թ-ին³⁸, նոր ձևավորված Բարձրագույն դատական խորհրդի իրավաբան-գիտնական անդամների ընտրությունը ինչպես 2018 թ-ի մարտ ամսին, այնպես էլ դրանից հետո³⁹: Նշված բոլոր դեպքերում Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող

³⁶ՀՀ Սահմանադրություն, հոդված 103, մաս 1-ին:

³⁷Նույն տեղում, մաս 2-րդ:

³⁸Ազատություն, Մարտին Գալստյանն ընտրվեց Կենտրոնական բանկի նախագահ, <https://www.azatutyun.am/a/30560985.html>

³⁹Ազատություն, Գագիկ Զհանգիրյանն ու Դավիթ Խաչատրյանն ընտրեցին ԲԴԽ անդամներ, <https://www.azatutyun.am/a/31063941.html>

Սիլվիանեթ, Գրիգոր Բեքմեզյանն ընտրվեց ԲԴԽ անդամ, <https://www.civilnet.am/news/192171/%D5%B7%D5%B8%D6%82%D5%BF%D5%B8%D5%BE-%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AF%D5%A6%D5%A3%D5%A1%D6%84-%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80-%D5%A2%D5%A5%D6%84%D5%B4%D5%A5%D5%A6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%BE%D5%A5%D6%81-%D5%A2%D5%A4%D5%AD-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4/>

քաղաքական ուժը միայն իր պատգամավորների քվեարկությամբ կարողացել է ընտրել առաջադրված թեկնածուին և ընդունել օրենքների նախագծերը:

Այս համատեքստում, վերահաստատվում են, դեռևս Սահմանադրության փոփոխությունների փաթեթի քննարկումների ընթացքում փորձագետների այն պնդումները, որ փոփոխություններով խրախուսվող մեծամասնական ժողովրդավարության ինստիտուտները կարող են փակել տարբեր կուսակցությունների և սոցիալական խմբերի քաղաքական երկխոսության հեռանկարը՝ փոխարենն ամրապնդելով միակուսակցական մեծամասնության իշխանությունը: Առաջարկվող «օրգանական օրենքները», որոնք ընդունվում են ԱԺ-ի ընդհանուր ձայների առնվազն երեք հինգերորդով, հնարավորություն կընձեռեն խորհրդարանական փոքրամասնություններին ազդել մի շարք որոշումների ընդունման վրա, սակայն քաղաքական ընդդիմության առավելապես դիտորդական կարգավիճակի վրա չեն ազդի⁴⁰: Ըստ փորձագետների՝ «սահմանադրական լուծումները հիմնվում են «հաղթողը վերցնում է ամեն ինչ» սկզբունքի վրա, և երկրում մասնակցային ժողովրդավարության լուրջ պակաս կա՝ նոր կառավարման համակարգը կարող է ուժեղացնել հասարակության բևեռացումն ու նոր քաղաքական ճգնաժամերի պատճառ դառնալ»⁴¹:

Սահմանադրությամբ Ազգային ժողովն առաջին անգամ ստացավ նաև Սահմանադրության առանձին հոդվածներ փոփոխելու հնարավորություն: Բացառությամբ Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միայն հանրաքվեի միջոցով փոփոխության ենթակա հոդվածների⁴², Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, ընդ որում՝ համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի⁴³: Այս իրավասությունից Ազգային ժողովն օգտվեց 2020 թ.-ին՝ փոփոխության ենթարկելով Սահմանադրության 213-րդ հոդվածի դրույթները և նախատեսելով Սահմանադրական դատարանի դատավորների (անդամների) և նախագահի պաշտոնավարման նոր դրույթներ⁴⁴:

Չնայած Սահմանադրությամբ Ազգային ժողովին տրված վերահսկողական լիազորությունների⁴⁵, այդուամենայնիվ դրանց արդյունավետ իրականացումը

⁴⁰ Առավոտ, «Ապելլա» ինստիտուտի կարծիքը Հայաստանում սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ, 2015, <https://www.aravot.am/2015/11/29/633791/>

⁴¹ Նույն տեղում:

⁴² Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով:

⁴³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 202, մաս 2-րդ:

⁴⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ, ընդունված Ազգային ժողովի կողմից 2020 թ. հունիսի 20-ին:

⁴⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 103-119:

կառավարության հետ նույն քաղաքական ուժը ներկայացնող կայուն խորհրդարանական մեծամասնության պարագայում խորհրդարանում հակակշիռների բացակայության պայմաններում դառնում է անիրատեսական, ինչն արտահայտվել է նաև պրակտիկայում:

Նախագահի դերը՝ ըստ Սահմանադրության

Ինչպես արդեն նշվեց, Հանրապետության նախագահին ընտրելու լիազորությունը պատկանում է Ազգային ժողովին⁴⁶, ինչը խորհրդարանական կառավարման ձևի անցման հիմնական դրսևորումներից էր: Նման կարգավորումը ոչ միայն սահմանափակում է քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներում, այլև կայուն խորհրդարանական մեծամասնության պայմաններում ունակ է բացասաբար ազդելու կառավարման համակարգում զսպիչների ու հակակշիռների ապահովման վրա⁴⁷:

Չնայած Սահմանադրությամբ Նախագահը պետության գլուխն է, ի տարբերություն նախորդ խմբագրությամբ Սահմանադրությունների՝ նախագահի լիազորությունները խիստ սահմանափակ են: Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: Նա լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ,⁴⁸ անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով⁴⁹: Նախագահի լիազորությունները ներառում են՝ օրենքների ստորագրում և հրապարակումը, պետական պաշտոնների նշանակումը և ազատումը, քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը, պարգևատրման և պատվավոր կոչումներ շնորհելը, բարձրագույն դասային աստիճանի շնորհումը:

Ըստ Սահմանադրության՝ կախված սահմանադրությամբ կանխորոշված նպատակներից՝ Հանրապետության նախագահի լիազորությունները իրենց բնույթով ինչպես պարտադիր են, այնպես էլ հայեցողական: Հանրապետության նախագահի լիազորությունները ինքնուրույն և ոչ ինքնուրույն են, վերջիններն իրականացվում են կամ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կամ սահմանադրական այլ մարմնի լիազորությունների իրականացման հիմքով⁵⁰:

Մասնավորապես, նախագահի մի շարք լիազորություններ իրականացվում են բացառությամբ Կառավարության կամ վարչապետի առաջարկությամբ, այդ թվում՝ կարևորագույն լիազորություններ, ինչպիսիք են միջազգային պայմանագրերի կնքումը, դիվանագիտական ներկայացուցիչների նշանակումը և հետկանչումը, Ազգային ժողովի

⁴⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 125, մաս 1-ին:

⁴⁷ Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման կարգ ունեցող երկրներ, օրինակ, Վրաստանը և Մոլդովան, հրաժարվել են խորհրդարանի կողմից նախագահի ընտրության մոդելից և վերադարձել ուղիղ ընտրությունների:

⁴⁸ ՀՀ Սահմանադրությունը, հոդված 124, մաս 5-րդ:

⁴⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 123, մաս 3-րդ:

⁵⁰ ՀՀ Սահմանադրական դատարան, որոշում թիվ ՍԴՈ-1518, 01 ապրիլի 2020 թ:

կողմից վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերի հաստատումը, կասեցումը կամ դրանք չեղյալ հայտարարումը⁵¹, զինվորական բարձր հրամանատարական կազմի նշանակումը նպաշտոնից ազատելը, բարձրագույն զինվորական կոչումների շնորհումը⁵²:

Նախագահը չունի վետոյի իրավունք: Սահմանադրությամբ Ազգային ժողովի ընդունած օրենքի առնչությամբ միակ կանխարգելիչ վերահսկողական լիազորությունն է Սահմանադրական դատարանի դիմելը, որը կոչված է ապահովելու Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնության իրականացումը⁵³: Այլ մարմինների առաջարկությամբ իրականացվող լիազորությունների դեպքում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկությամբ կամ միջնորդությամբ դիմած մարմնին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում առարկությունները, Նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում Սահմանադրական դատարան: Այս պահանջները չկատարելու դեպքում համապատասխան իրավական ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով⁵⁴:

Միաժամանակ, Նախագահն իրավասու չէ ստորագրելու Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրական փոփոխությունները⁵⁵:

Ըստ փորձագետի կարծիքի՝ վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ այնուամենայնիվ նախագահական ինստիտուտի ձևավորման ներդրված տարբերակը և լիազորությունների շրջանակը ոչնչով չեն նպաստում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչը պահանջում է առաջնային մանդատով ընտրված նախագահ, միաժամանակ խորհրդարանական լուրջ վերահսկողությունով, այդ թվում՝ անվտանգության ոլորտի ծառայությունների, նախաքննական մարմինների և այլ մարմինների նկատմամբ⁵⁶:

Կառավարության կարգավիճակը՝ ըստ Սահմանադրության

Սահմանադրության ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի պետական համակարգում կենտրոնական մարմինը կառավարությունն է ու դրա ղեկավարը: Այն գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է, իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը⁵⁷:

⁵¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 132:

⁵² ՀՀ Սահմանադրություն, հոդված 133:

⁵³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 129, մաս 1-ին:

⁵⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 139, մաս 3-րդ:

⁵⁵ ՀՀ Սահմանադրական դատարան, ՄԴՈ-1590, 29.04.2021 թ., ՀՀ Սահմանադրություն, հոդված 129:

⁵⁶ Մեդիա Կենտրոն, ՀՀ Կառավարման կարգը, արդյոք անհրաժեշտ են սահմանադրական բարոփոխումներ, փորձագիտական քննարկում, https://www.youtube.com/watch?v=zLa5ZBRG_BU

⁵⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 145:

Իշխանությունների օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպիչների և հակակշիռների ապահովման հնարավորությունների համատեքստում էական է կառավարության կազմավորման կարգը: Մասնավորապես, Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին: Այսինքն, Ազգային ժողովում կայուն խորհրդարանական մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը ներկայացնում է իր թեկնածուին, ով անհապաղ նշանակում է վարչապետ: Այս պարագայում, Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածուի քվեարկություն տեղի չի ունենում, կայուն խորհրդարանական մեծամասնության առաջադրած թեկնածուն նշանակվում է վարչապետ, և այդ անձը կարող է չլինել կոնկրետ կուսակցության կամ դաշինքի առաջնորդը: Այսինքն, վարչապետի անձի ընտրությունը դուրս է ինչպես քաղաքացիների, այնպես էլ պետական մարմինների, այս թվում՝ ընտրված Ազգային ժողովի կամ Նախագահի կամքից կամ վերահսկողությունից: Միաժամանակ, վարչապետի հրաժարականի կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Ազգային ժողովի խմբակցությունները, այդ թվում՝ ընդդիմադիր, իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածու, որն արդեն ընտրվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Սահմանադրությունը Ազգային ժողովին իրավասություն է տալիս անվստահություն հայտնելու վարչապետին, որի վերաբերյալ նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը՝ որոշման նախագծով միաժամանակ նոր վարչապետի թեկնածու առաջադրելով: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ:⁵⁸

Նշանակվելուց հետո վարչապետը կազմավորում է կառավարությունը՝ փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին առաջարկելով Նախագահին՝ նշանակման համար: Ի տարբերություն մյուս դեպքերի՝ Նախագահը առարկություններով առաջարկը վերադարձնելու հնարավորություն կառավարության անդամների նշանակման դեպքում չունի: Նա եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Նախագահը սույն պահանջները չի կատարում, համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով⁵⁹:

Կառավարության ծրագիրը հաստատվում է Ազգային ժողովի կողմից արդեն պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ընդ որում, Կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում Ազգային ժողովն արձակվում է

⁵⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 115:

⁵⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 150:

իրավունքի ուժով⁶⁰: Նախորդ տարիների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ Ազգային ժողովում Կառավարության ներկայացված երկու ծրագրերն էլ ընդունվել են առանց որևէ լուրջ քննարկման և քննադատության:

Սահմանադրությամբ էականորեն լայն լիազորություններ են տրված կառավարության ղեկավարին: Մասնավորապես, վարչապետը կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև ղեկավարում է կառավարության գործունեությունը, համակարգում դրա անդամների աշխատանքը, հրավիրում և վարում է կառավարության նիստերը և ստորագրում որոշումները, կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալիս կառավարության անդամներին: Վարչապետը գլխավորում է նաև Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման կարգը սահմանվում է օրենքով:

ՀՀ Սահմանադրության էական փոփոխություններից էր նաև զինված ուժերի կառավարման և ղեկավարման համար պատասխանատու մարմինների փոփոխությունը: Ըստ Սահմանադրության՝ զինված ուժերը գտնվում են կառավարության ենթակայության ներքո՝ անմիջականորեն ղեկավարվելով պաշտպանության նախարարի կողմից այն քաղաքականության ուղղությունների շրջանակներում, որոնք որոշվում են վարչապետի ղեկավարությամբ գործող Անվտանգության խորհրդի կողմից: Չինված ուժերի շտաբի պետին, ով համարվում է զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը, վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը: Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովման համատեքստում՝ ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է: Այս համատեքստում՝ վարչապետի ղերակատարությունը պետության կառավարման համակարգում առավել ընդգծվում է՝ ի համեմատություն Հանրապետության նախագահի դիրքի և լիազորությունների: Ավելին, ըստ փորձագետների՝ գերագույն հրամանատարի փոփոխելիությունը խնդրահարույց է զինված ուժերի կառավարելիության տեսանկյունից զինված ուժերի գերագույն հրամանատարի պաշտոնը պետք է լինի ստաբիլ և ստատիկ, և փոփոխության չենթարկվի⁶¹:

Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած խորհրդարանական կառավարման կարգի հաստատման, ոչ Ազգային ժողովը (առնվազն նախագահի մակարդակով), ոչ Հանրապետության նախագահը ներկայացված չեն Անվտանգության խորհրդում և կարող են մասնակցել դրա նիստերին՝ բացառապես վարչապետի կողմից հրավիրվելու դեպքում,⁶² ինչը

⁶⁰ՀՀ Սահմանադրություն, հոդված 151:

⁶¹1in.am, «ՀՀ Անվտանգության մարտահրավերները և Սահմանադրությունը» քննարկում, <https://www.youtube.com/watch?v=nsg8C2IaXvs>

⁶²Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին ՀՀ օրենք, հոդված 3, 4:

Էականորեն նվազեցնում է ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ Հանրապետության նախագահի լիազորությունները պաշտպանության և անվտանգության ոլորտում:

Ավելին, արդեն օրենսդրական մակարդակում, Ազգային ժողովը գրկված է այնպիսի ոլորտներում ուղիղ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից, ինչպիսին է զինված ուժերի օգտագործման, այդ թվում՝ ՀՀ տարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցության դեպքում իրավունքի ուժով Ազգային ժողովի հատուկ նիստի հրավիրումը: Գործող Սահմանադրական կարգավորումներով իրավունքի ուժով Ազգային ժողովի հատուկ նիստ հրավիրվում է Կառավարության կողմից ռազմական դրություն կամ արտակարգ դրություն հայտարարելու դեպքում, իսկ զինված ուժերի կիրառման վերաբերյալ որոշում կայացվում է կառավարության կողմից՝ առանց Ազգային ժողովի հատուկ նիստում այդ որոշման և հետևանքների քննարկման⁶³:

Նմանապես, չնայած խորհրդարանական կառավարման կարգի՝ Ազգային ժողովն ուղղակի վերահսկողություն չունի իրավապահ և քննչական մարմինների նկատմամբ, որոնք հաշվետու և ենթակա են կառավարությանը և վարչապետին⁶⁴:

Այսպիսով, 2015թ. ընդունված սահմանադրական փոփոխություններով անցում կատարվեց խորհրդարանական կառավարման կարգի, որի շրջանակներում խորհրդարանական մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը ստացավ անսահմանափակ իշխանություն ինչպես օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի, այնպես էլ, ինչպես կուսումնասիրենք ստորև, դատական իշխանության նկատմամբ:

⁶³Պաշտպանության մասին ՀՀ օրենք, հոդված 7:

⁶⁴Քննչական կոմիտեի մասին ՀՀ օրենք, հոդված 8, Ազգային անվտանգության մարմինների մասին ՀՀ օրենք, հոդված 3:

Դատական իշխանության տեղը իշխանությունների տարանջատման, զսպիչների և հակակշիռների համատեքստում

Քննարկելով Հայաստանի կառավարման համակարգի հարցերը՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական համակարգերի միջև հիմնարար ընտրությունը քաղաքական ընտրություն է, որը պետք է կատարվի տվյալ պետության կողմից, և բոլոր այս համակարգերը կարելի է համապատասխանեցնել ժողովրդավարական չափանիշներին: Կենտրոնական նշանակություն ունի այն, որ առաջին հերթին՝ երաշխավորվի դատական իշխանության անկախությունը բոլոր համակարգերում⁶⁵:

Հետազոտության այս բաժնում ներկայացվում է ՀՀ Սահմանադրությամբ դատական իշխանությանն ուղղված կարգավորումները և հատկապես դատական իշխանության և օրենսդիր ու գործադիր մարմինների հարաբերությունները՝ զսպիչների և հակակշիռների սկզբունքի ապահովման համատեքստում:

Որպես կանոն, դատական իշխանությունը կարող է արդյունավետ իրականացնել արդարադատության ապահովման իր գործառույթը, եթե այն անկախ է և օժտված անհրաժեշտ իշխանությամբ: Սա ենթադրում է, որ դատական իշխանության անկախության ապահովումը առաջին հերթին օրենսդիր և գործադիր իշխանության պատասխանատվությունն է:

Ըստ այդմ, կայացած ժողովրդավարական երկրներում գործում է այն սկզբունքը, որ իրավունքի գերակայությունը անքակտելի է, կա իշխանությունների բալանսավորված բաժանում և դատական իշխանության անկախության ապահովված է:

Այս հարցում հաջողած երկրների փորձը ցույց է տալիս նաև, որ իշխանությունների բաժանումն ու դատական իշխանության անկախությունը հիմնարար իրավունքների ապահովման հիմնական նախապայմանն է, առանց որի խոսք գնալ չի կարող ժողովրդավարության մասին: Սա լավագույնս տեսանելի է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակով, որի Սահմանադրությունը հիմնվում է զսպիչների և հակակշիռների սկզբունքի վրա ձևավորված իշխանությունների բաժանման վրա՝ ներառելով ուժեղ դատական համակարգ, որն էլ արտահայտվում է Գերագույն դատարանի միջոցով: Չնայած վերջինիս որոշ որոշումներ պատմության մեջ միմյանց հակասող են մնացել, Ամերիկյան

⁶⁵Վենետիկի հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, CDL-PI (2015)015rev, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm)

Սահմանադրության կայունությունն ու իրավունքների երաշխիքները հստակ ցույց են տալիս ժողովրդավարության կենսականությունը իշխանությունների բաժանման սկզբունքի շուրջ⁶⁶:

Դատական իշխանության անկախության հարցը ներկայացվում է երկու հիմնական կոնտեքստով՝ արտաքին և ներքին անկախություն⁶⁷: Արտաքին անկախության ապահովումը ուղղակիորեն կապված է օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ: Մա հնարավոր է ապահովել սահմանադրական և դրանից բխող օրենսդրական հստակ կարգավորումների, ինչպես նաև երաշխիքների պրակտիկ կիրառման միջոցով բացառապես: Առանձնակի նշանակություն ունի իրավունքի գերակայության սկզբունքի ապահովումը՝ որպես իշխանությունների բաժանման ու հավասարակշռման և ըստ այդմ՝ նաև դատական իշխանության անկախության ապահովման երաշխիք:

Վենետիկի հանձնաժողովի կողմից մշակված Իրավունքի գերակայության ստուգման գործիքով սահմանվում է, որ դատական իշխանության անկախությունը ենթադրում է նախ և առաջ արտաքին ճնշումներից ազատություն և քաղաքական ազդեցությունների բացակայություն⁶⁸: Նույն այդ գործիքը դատական իշխանության անկախության համար նախատեսում է 4 հիմնական տարր՝

- Նշանակման ընթացակարգ,
- Պաշտոնավարման ժամկետ,
- Արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքներ, ներառյալ ֆինանսաբյուջետային անկախությունը,
- Անկախության և անկողմնակալության արտաքին դրսևորման ապահովում:

Նշված գործոնների ներքո ստորև ներկայացվում են ՀՀ Սահմանադրության և սահմանադրական փոփոխություններով դատական իշխանության հարաբերակցությունը իշխանության մյուս ճյուղերի հետ, նախատեսված երաշխիքները, բացերն ու դրական զարգացման միտումները:

⁶⁶Պ. Սաուվ, Դատական համակարգն ու իշխանությունների տարանջատումը, դասախոսություն, հասանելի է անգլերենով <https://www.conseil-etat.fr/actualites/discours-et-interventions/the-judiciary-and-the-separation-of-powers> կայքում:

⁶⁷ Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե, Դատավորներ. Անկախություն, արդյունավետություն և պատասխանատվություն, CM/Rec(2010)12, հասանելի է <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d> կայքում:

⁶⁸ Վենետիկի հանձնաժողով, Իրավունքի գերակայության ստուգաթերթ CDL-AD(2016)007rev, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)007-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)007-e) կայքում:

Դատական իշխանության սահմանադրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Իշխանությունների տարանջատման և հավասարակշռման համատեքստում առանձնակի կարևորություն ունեն դատական իշխանությանը տեսականորեն և գործնականում տրված անկախության երաշխիքները, ինչը իրավունքի գերակայության և ժողովրդավարության հաստատման կարևոր նախապայման և միևնույն ժամանակ հետևանք է:

Հայաստանի Հանրապետությունում քննարկվող հարցը անկախացումից ի վեր արդիական է եղել: Սակայն մինչ օրս դեռևս ամբողջական լուծում չի ստացել, չնայած որ ինչպես Սահմանադրությունը, այնպես էլ հարակից օրենսդրական ակտերը ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների:

Անդրադառնանք ՀՀ Սահմանադրությամբ ու իրականացված փոփոխություններով նախատեսվող կարգավորումներին առանձին-առանձին:

1995 թվականի Սահմանադրություն

ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ դատական իշխանության անկախության համար տրված երաշխիքներն իրենց բնույթով բնորոշ են եղել անցումային շրջանի պետության կարգավորումներին, և, ըստ էության, բավարար չէին գործուն գապիչների ու հակակշիռների համակարգ ձևավորելու համար:

Սահմանադրության 49-րդ հոդվածը սահմանում էր, որ Հայաստանի Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հոդված 55-ի 11-րդ կետի համաձայն՝ նախագահը *նշանակում է վճարեկ դատարանի և նրա պալատների, վերաքննիչ, առաջին աստիճանի նալ դատարանների նախագահներին ու դատավորներին, գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազներին, կարող է դադարեցնել դատավորի լիազորությունները, համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել դատավորին, ազատում է իր կողմից նշանակված դատախազներին.*

Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ **Դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն էր:** Նա գլխավորում է արդարադատության խորհուրդը: Նույն հոդվածը կարգավորում էր նաև այդ ժամանակ գործող արդարադատության խորհրդի կազմավորման կարգը, որում ևս Հանրապետության նախագահն ուներ լայն հայեցողական լիազորություններ:

Մասնավորապես, Արդարադատության խորհրդի կազմի մեջ են մտնում նաև Հանրապետության նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: *Արդարադատության նախարարը գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն են:*

Խորհրդի երեքական անդամ նշանակվում են առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորներից: Դատավորների ընդհանուր ժողովները յուրաքանչյուր տեղի համար գաղտնի քվեարկությամբ առաջադրում են երեքական թեկնածու: Խորհրդի դատախազ անդամների թեկնածությունները առաջադրում է գլխավոր դատախազը⁶⁹:

Սահմանադրության 95-րդ հոդվածը սահմանում էր Արդարադատության խորհրդի գործառույթները՝

1. *արդարադատության նախարարի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.*
2. *գլխավոր դատախազի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատախազների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.*
3. *առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածությունները, եզրակացություն է տալիս արդարադատության նախարարի ներկայացրած մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ.*
4. *եզրակացություն է տալիս գլխավոր դատախազի կողմից ներկայացված գլխավոր դատախազի տեղակալների և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազների թեկնածությունների վերաբերյալ.*
5. *առաջարկ է ներկայացնում դատավորներին և դատախազներին որակավորման դասեր շնորհելու մասին.*
6. *առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին.*
7. *դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության: Դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս՝ արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը:*

⁶⁹ ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., հոդված 94:

Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը եզրխավոր դատախազը այդ նիստերին չեն մասնակցում.

8. Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ:

Մեջբերված հոդվածներից նկատելի է դատական իշխանության անկախության ապահովման խնդրահարույց կարգավորումը, որը էապես կապված էր այդ շրջանի ՀՀ կառավարման մոդելից նաև, այն է՝ կիսանախագահական համակարգում նախագահին տրված լայն լիազորություններով:

Մասնավորապես, դատավորների նշանակման և լիազորությունների դադարեցման գործում Հանրապետության Նախագահն ուներ լայն լիազորություններ: Ողջ դատական համակարգի ձևավորումը, ըստ էության, ուղղակիորեն նախագահի իրավասության ներքո է գտնվել՝ միանձնյա սահմանադրական դատարանի չորս անդամների ու նախագահի նշանակում, վճռաբեկ դատարանի, վերաքննիչ ու առաջին ատյանի դատարանների նախագահների ու դատավորների նշանակում: Նմանապես, նախագահը իրավասու էր դադարեցնել իր նշանակած Սահմանադրական դատարանի անդամների և դատավորների լիազորությունները:

Ուշադրության արժանի է նաև Սահմանադրությամբ ամրագրված Արդարադատության խորհրդի կազմը և հատկապես ղեկավար կազմը: Ինչպես արդեն ներկայացվեց, Արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին արդարադատության նախարարն ու գլխավոր դատախազը, որոնցից և ոչ մեկը դատական համակարգի մաս չէր կազմում: Ավելին, Հանրապետության Նախագահի կողմից էին նշանակվում խորհրդի բոլոր 14 անդամները: Սահմանադրությամբ չնայած ամրագրված էր, որ խորհրդի երեքական անդամ նշանակվում էին առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորների, ընդ որում, դատավորների ընդհանուր ժողովը այդ տեղերի համար առաջադրում էր երեքական թեկնածու, այնուհանդերձ այս դեպքում ևս նախագահին լայն հայեցողություն էր տրված այդ երեք թեկնածուներից կատարել ընտրություն:

Հանրապետության նախագահը անձամբ Արդարադատության խորհրդի նախագահողն է, և մնացած անդամների նշանակումը փաստորեն այս կամ այն կերպ կախված էր նախագահից:

Դիտարկելով Արդարադատության խորհրդի կազմն ու ձևավորման կարգը, որտեղ էական դերակատարում ուներ հանրապետության նախագահը, նմանապես նաև դատավորների նշանակման և պաշտոնից ազատման հարցում նախագահին տրված լայն լիազորությունները, կարելի է արձանագրել դատական իշխանության նկատմամբ հանրապետության նախագահի լիազորությունների և ազդեցության շրջանակը, ինչը դատական համակարգը կախվածության մեջ էր գցում նախագահից:

Ինքնին դատական համակարգի անկախության ապահովման երաշխավորումը Հանրապետության Նախագահին վերապահելը լուրջ խնդիր էր, ինչը չէր կարող իր հետևանքները չունենալ դատական համակարգի կայացման, անկախ ու արդյունավետ գործունեության վրա: Մեջբերված հոդվածներից և կարգավորումներից կարելի է նկատել դատական համակարգի գործունեության և մասնավորապես դատավորների նշանակման ու լիազորությունների դադարեցման գործում, Արդարադատության խորհրդի կազմավորման գործում Ազգային ժողովի դերակատարման բացակայությունը, ինչը լինելու պարագայում, կարող էր որոշակիորեն զսպման դեր ստանձնել:

Ինչ վերաբերում է Ազգային ժողով-դատական իշխանություն հարաբերակցությանը, ապա այստեղ հիմնական գործառույթը բյուջեի ու ֆինանսական միջոցների հաստատումն էր, ինչը իրականացվել է կառավարության առաջարկի հիման վրա: Այսինքն, այս հարցում ևս որոշիչ դերակատարները եղել են Կառավարությունը և Ազգային ժողովը:

Դատական իշխանության կողմից իր հերթին գործադիր ու օրենսդիր իշխանության նկատմամբ հակակշիռների հնարավորությունը այս շրջանում հիմնականում վերապահված էր Սահմանադրական դատարանին որը ըստ Սահմանադրության 99-րդ հոդվածի՝ *կազմված է ինն անդամից, որից հինգին նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության նախագահը:*

Սահմանադրական դատարանը

1. որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.
2. մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը.
3. լուծում է հանրաքվեների, Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը.
4. անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.
5. եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.
6. եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարիչության մասին:

Հանրապետության նախագահի պաշտոնանկության համար Սահմանադրությունը սահմանում էր, որ այդ հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան: Հանրապետության Նախագահին պաշտոնանկ

անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Հաշվի առնելով սակայն Սահմանադրական դատարանի անդամների նշանակման իրավասություն ունեցող մարմինները՝ Սահմանադրական դատարանը պրակտիկայում չապահովեց իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ զսպիչների և հակակշիռների մեխանիզմի իրագործումը:

Կարող ենք արձանագրել, որ 1995 թվականի սահմանադրական կարգավորումներով դատական համակարգի ձևավորման և գործունեության նկատմամբ Հանապետության նախագահի լայն լիազորությունների համատեքստում, դատական իշխանության անկախության երաշխիքներ գրեթե չեն եղել, չեն գործել նաև զսպիչների և հակակշիռների գործուն համակարգ:

2005 թվականի Սահմանադրական փոփոխություններ

2005 թվականի սահմանադրական փոփոխությունները նպատակ էին հետապնդում բալանսավորել իշխանությունների տարանջատումն ու մասնավորապես հստակեցնել նախագահի լիազորությունները, ինչպես նաև երաշխավորել դատական իշխանության անկախությունը:

Պետք է սակայն նշել, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով ՀՀ-ում պահպանվում էր կիսանախագահական կառավարման ձևը՝ հստակեցնելով նախագահի և կառավարության լիազորությունների հարաբերակցությունը և բալանսավորումը:

Սահմանադրության փոփոխությունների համաձայն՝ Հանրապետության նախագահն այլևս դատական իշխանության անկախության երաշխավորը չէր, այլ հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը⁷⁰: Ավելին, ի տարբերություն 1995 թվականի Սահմանադրական կարգավորումների, 2005 թվականի փոփոխություններից հետո Սահմանադրության 94-րդ հոդվածով սահմանվում էր, որ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Այդուամենայնիվ, Հանրապետության նախագահը շարունակում էր ունենալ դատավորների և Սահմանադրական դատարանի անդամների նշանակման լիազորություն: Այսպես, Սահմանադրության 55-րդ հոդվածով նախագահը, ի թիվս այլ լիազորությունների՝

⁷⁰ՀՀ Սահմանադրություն, 2005թ. խմբագրություն, հոդված 49:

10) նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ:

Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին:

11.1) նշանակում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներ:

Նույնկերպ, ի տարբերություն Սահմանադրության նախորդ խմբագրության տեքստի, երբ Հանրապետության Նախագահը միանձնյա հիմնական դերակատարն էր այս հարցում, փոփոխություններից հետո նշմարվեցին որոշ երաշխիքներ Արդարադատության խորհրդի անկախության համար:

Մասնավորապես, համաձայն Սահմանադրության՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Այսպիսով, Արդարադատության խորհրդի կազմի ձևավորման հարցում էական ինքնավարություն տրվեց դատական իշխանությանը՝ ի դեմս դատավորների ընդհանուր ժողովի, ինչպես նաև Ազգային ժողովն իրավասություն ստացավ նշանակել անդամ իրավաբան-գիտնականների: Ավելին, Արդարադատության խորհրդի կազմից դուրս մնացին ինչպես Հանրապետության նախագահը, այնպես էլ Արդարադատության նախարարն ու Գլխավոր դատախազը: Ըստ կարգավորումների, սակայն, Արդարադատության խորհրդի նիստերը վարում էր Վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Չնայած քվեարկության իրավասության բացակայության՝ Արդարադատության խորհրդի

նիստերը վարելու իրավասության փաստն ինքնին որոշիչ դերակատարում էր տալիս Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հաշվի առնելով նաև դատական եռաստիճան համակարգում վերջինիս ունեցած դերը: Ավելին, սա պետք է դիտարկել նաև Հանրապետության նախագահի կողմից Վճռաբեկ դատարանի նախագահին նշանակելու իրավասության լույսի ներքո: Սա հնարավորություն էր ստեղծում Հանրապետության նախագահին ունենալու ազդեցություն ինչպես Վճռաբեկ դատարանի նախագահի, այնպես էլ ողջ դատական իշխանության և Արդարադատության խորհրդի գործունեության վրա:

Ինչ վերաբերում է Արդարադատության խորհրդի լիազորություններին, ապա 95-րդ հոդվածով սահմանվում էր, որ

Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1. կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.
2. եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ.
3. առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.
4. Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ.
5. դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

Փոփոխությունների հիման վրա, չնայած Արդարադատության խորհրդի ստացած դերակատարությամբ՝ վերջնական և վճռորոշ որոշումները կայացվում էին Հանրապետության նախագահի կողմից՝ դրանով իսկ պահպանելով դատական իշխանության նկատմամբ ազդեցության էական լծակներ:

Խոսելով Ազգային ժողովի լիազորությունների շրջանակի մասին՝ հիշատակման է արժանի դատական իշխանության բյուջեի հաստատման ու կատարման նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև Արդարադատության խորհրդի ձևավորման հարցում ունեցած դերակատարությանը:

Սահմանադրության 76-րդ հոդվածը նախատեսում էր, որ Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն, ինչպես նաև վերահսկողություն իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոփոխությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ըստ Դատական օրենսգրքի՝ դատական իշխանության բյուջեի հայտի մշակվում էր դատական դեպարտամենտի կողմից և հաստատվում Դատարանների նախագահների խորհրդի կողմից, սակայն վերջնական որոշումն ընդունվում էր Կառավարության և Ազգային ժողովի կողմից: Դատարանների բյուջետային հայտն ընդունվելու դեպքում կառավարության կողմից ընդգրկվում էր պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում դրանք պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում էին Ազգային ժողովին: Միաժամանակ, Կառավարությունը Ազգային ժողովին և Դատարանների նախագահների խորհրդին ներկայացնում էր բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումներ⁷¹:

Ինչ վերաբերում է Սահմանադրությամբ դատական համակարգին տրված լիազորություններին, ապա դրանք էության մասին էին, ինչ 1995 թվականի խմբագրության Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումները: Սահմանադրական դատարանն իրավասու էր որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության և վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, լուծել հանրաքվեների, ինչպես նաև Հանրապետության նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, եզրակացություն տալ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին և այլն⁷²:

Այսպիսով, 2005թ. սահմանադրական փոփոխությունների հիման վրա, չնայած նախատեսվում էին դատական իշխանության անկախության որոշակի երաշխիքներ, այդ թվում Արդարադատության խորհրդի կազմում դատավոր անդամների մեծամասնությամբ, սակայն շարունակում էին պահպանվել Հանրապետության նախագահի էական դերակատարությունը և ազդեցության հնարավորությունը դատական իշխանության վրա՝ դատավորների նշանակման և պաշտոնից ազատման որոշումների համատեքստում:

2015 թվականի Սահմանադրական փոփոխություններ

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունը անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի, ինչը ենթադրում էր իշխանությունների տարանջատման համատեքստում իշխանության յուրաքանչյուր թևի ձևավորման և փոխադարձ զսպիչների նոր մոտեցումներ:

⁷¹ Դատական օրենսգրք, ընդունված 21.02.2007 թ. հոդված 64:

⁷² ՀՀ Սահմանադրություն, 2005թ, հոդված 100:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսվեցին մի քանի նոր ինստիտուտներ ու սկզբունքներ, որոնք, ակնկալվում էր, որ պետք է բարձրացնեին դատական իշխանության անկախությունն ու արդյունավետությունը:

Այսպես, 2015 թվականին փոփոխություններից հետո առաջին անգամ համակարգում ներդրվեց միջազգային չափանիշներին համապատասխանող դատական իշխանության ինքնակառավարման մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ ԲԴԽ կամ Խորհուրդ):

Սահմանադրությամբ սահմանվեց, որ Բարձրագույն դատական խորհուրդը անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը⁷³: Նույն մոտեցումը ամրագրվեց հետագայում նաև Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով⁷⁴: Հատկանշական է, որ մինչ այս փոփոխությունները առկա օրենսդրական կարգավորումներով նախկինում գործող Արդարադատության խորհուրդը չէր դիտարկվում որպես դատարանների անկախության երաշխավորող: Սահմանադրությամբ թեև նախատեսվում էր Արդարադատության խորհրդի գործունեությունը, սակայն, դատական իշխանության անկախության երաշխավոր այն չէր հանդիսանում:

Ներպետական օրենսդրության համաձայն՝ Խորհուրդը կազմված է տասն անդամից՝ դատավոր և ոչ դատավոր անդամների հավասար թվով: Հինգ դատավոր անդամներին ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Կազմում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ասյանների դատարաններից⁷⁵: Մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրման իրավունքի:

Դատավոր անդամների ընտրությունը լիովին համապատասխանում է միջազգային չափանիշներին, քանզի դատավոր անդամներն ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից:

Համաձայն Սահմանադրության 174 հոդվածի՝ *«Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով»*:

Ազգային ժողովի կողմից ԲԴԽ անդամների մի մասի ընտրությունը կարող է ընդունելի մոտեցում համարվել, եթե բացառվի գործընթացի քաղաքականացվածությունը: Ըստ գործող օրենսդրության՝ ԲԴԽ անդամի պաշտոնում մեկական թեկնածու առաջադրելու իրավունք

⁷³ ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով, հոդված 173:

⁷⁴ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 79:

⁷⁵ ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով, հոդված 174

ունեն խմբակցությունները⁷⁶, սակայն անդամների ընտրության համար անհրաժեշտ ձայների քանակը ենթադրում է խորհրդարանում մեծամասնություն հանդիսացող ուժի կողմից ցանկացած թեկնածուի ընտրություն՝ առանց ընդդիմության որոշիչ մասնակցության: ԲԴԽ ոչ դատավոր անդամների ընտրության պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրվել են բացառապես մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի առաջադրած թեկնածուները⁷⁷, ավելին, ընդդիմությունը չի ներկայացրել թեկնածու և նույնիսկ որոշ դեպքերում չի մասնակցել քվեարկությանը⁷⁸:

Ազգային ժողովը էական դերակատարում ունի նաև Սահմանադրական դատարանի անդամների ընտրության գործում: Սահմանադրության 166-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Չնայած Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման հարցում պահպանվում է իշխանությունների տարբեր ճյուղերի հավասարակշռումը և ունակ է ապահովել «անհրաժեշտ ժողովրդավարական լեգիտիմություն»⁷⁹, սակայն խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնող քաղաքական ուժի ձայները բավարար են Սահմանադրական դատարանի դատավորներ ընտրելու համար, ինչի արդյունքում Սահմանադրական դատարանի դատավորների գործունեության քաղաքականացվածության ռիսկեր են առաջանում: Նախորդ տարիների պրակտիկայի ուսումնասիրությունը ևս փաստում է, որ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների ընտրությունը կամ մերժումը կախված է բացառապես մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի դիրքորոշումից և որոշումից, և դատավորներն ընտրվել են բացառապես մեծամասնություն

⁷⁶Ազգային ժողովի կանոնակարգ օրենք, հոդված 144, մաս, 2-րդ:

⁷⁷Հետք, Վիգեն Քոչարյանն ընտրվեց ԲԴԽ անդամ, <https://hetq.am/hy/article/104912>; Միվիլենթ, Գրիգոր Բեքմեզյանը ընտրվել է ԲԴԽ անդամ, <https://www.civilnet.am/news/192171/%D5%B7%D5%B8%D6%82%D5%BF%D5%B8%D5%BE-%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AF%D5%A6%D5%A3%D5%A1%D6%84-%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80-%D5%A2%D5%A5%D6%84%D5%B4%D5%A5%D5%A6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%BE%D5%A5%D6%81-%D5%A2%D5%A4%D5%AD-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4/>,

Լիպարիտ Մելիքջանյանն ընտրվեց ԲԴԽ անդամ <https://www.aysor.am/am/news/2018/02/22/%D5%84%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D6%84%D5%B5%D5%A1%D5%B6/1378761> :

⁷⁸Ազատություն, Գագիկ Ջհանգիրյանն ու Դավիթ Խաչատուրյանը ընտրվեցին ԲԴԽ անդամներ, <https://www.azatutyun.am/a/31063941.html> ;

⁷⁹Վենետիկի հանձնաժողով, Կարծիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ, կետ 161:

ունեցող քաղաքական ուժի ձայներով⁸⁰: Նման պայմաններում, չնայած Սահմանադրությունը նախատեսում է որակյալ մեծամասնությամբ դատավորների ընտրություն, սակայն պրակտիկայում ընդդիմությունը ասելիք չի կարողանում ունենալ այս ընտրություններում:

Նմանատիպ մտահոգություն առկա է նաև Վճռաբեկ դատարանի պարագայում: Սահմանադրության նույն հոդվածը սահմանում է, որ «վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից»:

Ինչ վերաբերում է դատարանների նախագահների նշանակումներին, ապա Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների նախագահների համար սահմանվել է հիմնական հատկանիշներով միասնական կարգ ու մոտեցում: Նշանակումն իրականացվում է Հանրապետության նախագահի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկի հիման վրա:

Այսպիսով, դատական համակարգում կարևոր նշանակումները իրականացվում են Ազգային ժողովի կողմից, սակայն բացառապես մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի կողմից, ինչն ընդդիմության մասնակցության և մասնավորապես նաև չկայացած քաղաքական համակարգի պարագայում ունակ է ոչ միայն գործընթացը քաղաքականացնել, այլ նաև նվազեցնել նշանակումների անկախությունը:

Ինչպես արձանագրել է Վենետիկի հանձնաժողովը, «խորհրդարանի ներգրավվածությունը գործընթացին կարող է հանգեցնել դատավորների նշանակումների քաղաքականացման: Եվրոպական չափանիշների լույսի ներքո դատավորների ընտրությունը և կարիերան պետք է «հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումները, ազնվությունը, կարողությունները և արդյունավետությունը»: Խորհրդարանի ընտրությունները հայեցողական գործողություններ են, նույնիսկ եթե առաջարկներն արվում են դատական խորհրդի կողմից...: Հետևաբար, քաղաքական նկատառումները կարող են գերակայել օբյեկտիվ չափանիշներին: Վենետիկի հանձնաժողովը գտավ, որ «խորհրդարանն, անկասկած, շատ ավելի շատ է ներքաշված քաղաքական խաղերով, և դատավորների նշանակումները կարող են հանգեցնել քաղաքական սակարկությունների խորհրդարանում, որտեղ յուրաքանչյուր պատգամավոր, որը գալիս է այս կամ այն շրջանից, կցանկանա ունենալ իր սեփական դատավորը»:⁸¹

⁸⁰Ազատություն, Ազգային ժողովը առաջադրված երեք թեկնածուներին, <https://www.azatutyun.am/a/30839987.html>; Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրելու մասին, <https://www.president.am/hy/press-release/item/2020/08/04/Announcement/>

⁸¹ Վենետիկի հանձնաժողով, Դատական նշանակումներ, CDL-AD(2007)028, 10-11 կետեր, <https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028->

Անդրադառնալով 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագծին՝ Վենետիկի հանձնաժողովը փաստել է, որ «քաղաքական մարմինների ներգրավումը դատավորների նշանակման գործընթացում արդարացվում է նրանով, որ անհրաժեշտ է ապահովել որոշակի ժողովրդավարական լեգիտիմություն դատական իշխանության համար: Այնուամենայնիվ, նշանակումից հետո դատավորի և քաղաքական մարմնի միջև ցանկացած կապ պետք է խիստ կարգավորման ենթարկվի»⁸²:

Այս համատեքստում, դրական պետք է գնահատել Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով դատական համակարգի նշանակումների ապակենտրոնացումն ու մեկ անձի կամ ինստիտուտի կողմից միանձնյա նշանակումների պրակտիկայի վերացումը, ինչը անկախության լրացուցիչ երաշխիք է ստեղծում: Նույնը կարելի է նշել դատավորներին անձեռնմխելիությունից զրկելու, լիազորությունների դադարեցման հարցերի առնչությամբ, քանի որ կրկին անցում է կատարվել Հանրապետության նախագահի կողմից այդ որոշումները կայացնելը վերապահելով դատական իշխանության ինքնակառավարման մարմնին՝ ի դեմս Բարձրագույն դատական խորհրդի:

Սահմանադրության փոփոխությունների և նոր Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի ընդունմամբ Բարձրագույն դատական խորհուրդը ստացավ լիազորությունների բավականին լայն շրջանակ, այդ թվում՝ դատավորների թեկնածուների ընտրությունը, առաջխաղացումը և լիազորությունների դադարեցումը, կարգապահական պատասխանատվության ենթարկելը, դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելը, դատարանների պահուստային ֆոնդերի բաշխումը և մի շարք այլ գործառույթներ⁸³:

Դատավորների ընտրության ու նշանակման գործում էական դերակատարումը ներկայումս վերապահված է Խորհրդին, որը պատասխանատու է դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակների կազմման ու հաստատման համար՝ ներառյալ որակավորման գրավոր ու բանավոր հարցազրույցի փուլերը: Սակայն, ինչպես տեսանք, Սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի պարագայում էական դերակատարում ունի Ազգային ժողովը:

Ինչ վերաբերում է դատական համակարգ-Հանրապետության նախագահ հարաբերակցությանը, ապա Սահմանադրության փոփոխություններն ու 2018 թվականին ընդունված Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը այս առնչությամբ որոշակի նորամուծություններ է բերել:

⁸² Վենետիկի հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, CDL-PI (2015)015rev, 153 կետ, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm)

⁸³ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 89:

Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 117-րդ հոդվածը հստակեցնում է դատավորների նշանակման կարգը: ԲԴԽ կողմից թեկնածուների ցուցակները կազմելուց հետո՝ թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը: Առաջարկությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում Հանրապետության նախագահին ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ առաջարկությունն առարկություններով վերադարձնում է Բարձրագույն դատական խորհուրդ, որը պարտավոր է նիստ հրավիրել: Եթե Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում նշված հոդվածի 2-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերում նշված գործողությունները, ապա համապատասխան թեկնածուին նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով, ինչի մասին Բարձրագույն դատական խորհրդի նախագահը եռօրյա ժամկետում հրապարակում է հայտարարություն դատական իշխանության պաշտոնական կայքում:

Ինչպես տեսնում ենք, թեկնածուների նշանակման հարցում Հանրապետության նախագահը չունի նախկին լիազորությունները և կարող է բացառապես ներկայացնել իր առարկությունները Բարձրագույն դատական խորհրդին և դիմել Սահմանադրական դատարան: Ի տարբերություն արդեն իսկ քննարկված նախկին սահմանադրական կարգավորումների, նախագահի դերակատարումը դատավորների ընտրության և նշանակման հարցում էականորեն նվազեցված է:

Նախագահ-Ազգային ժողով-դատական իշխանություն փոխադարձ հարաբերակցության մեկ այլ օրինակ է Հանրապետության նախագահի պաշտոնանկության սահմանադրական հիմքերի ամրագրումը:

Ըստ Սահմանադրության՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար: Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան: Ազգային ժողովը նախագահին պաշտոնանկ անելու

մասին որոշում է կայացնում Մահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Իշխանության երեք թերի համատեղ փոխգործակցության օրինակ է նաև դատական իշխանության ֆինանսավորման և բյուջեի ընդունման գործընթացը: Ազգային ժողովն ընդունում է պետական բյուջեն և վերահսկողություն իրականացնում դրա կատարման նկատմամբ: Մահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ: Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից յուրաքանչյուր դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի համար առանձին տողով⁸⁴:

Դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջետային հայտի նախագիծը նախապատրաստում է Դատական ղեկարտամենտը, որը հաստատվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Բարձրագույն դատական խորհրդի հաստատած բյուջետային հայտը կամ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետներում ներկայացվում է Կառավարություն:

Բյուջետային հայտը Կառավարությունն ընդունում և ընդգրկում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում այն պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունը Ազգային ժողով և Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումները:

Բարձրագույն դատական խորհրդի դիրքորոշումը բյուջետային հայտի կամ միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ Ազգային ժողովում ներկայացնում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Դատական ղեկարտամենտի ղեկավարը: Չնայած Բարձրագույն դատական խորհրդի կողմից բյուջետային հայտի ներկայացումը դատական իշխանության ֆինանսավորման հարցում որոշակի ինքնուրույնություն է ապահովում, սակայն ներկայացված բյուջեի հաստատումը իրականացվում է Կառավարության և Ազգային ժողովի կողմից, և պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ ներկայացված բյուջետային հայտը չի հաստատվում ամբողջությամբ⁸⁵:

⁸⁴Դատական օրենսգիրք սահմանադրական օրենք, հոդված 38:

⁸⁵ Տե՛ս օրինակ 2020 թ. բյուջետային հայտը և պետական բյուջեի մասին օրենքով դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի բյուջեն <https://court.am/hy/news/185> և <https://www.gov.am/files/docs/3929.pdf> Ձեկույց «Դատական իշխանության անկախության ապահովում ֆինանսավորման միջոցով» հասանելի է՝ <https://prwb.am/hy/2022/02/10/%d5%a6%d5%a5%d5%af%d5%b8%d6%82%d5%b5%d6%81-%d5%a4%d5%a1%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ab%d5%b7%d5%ad%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%a1%d5%b6%d5%af%d5%a1%d5%ad%d5%b8%d6%82/>

Ամփոփելով 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ու ըստ այդմ Դատական օրենսգրքի կարգավորումները՝ կարելի է արձանագրել, որ նոր կարգավորումները իրենց բովանդակությամբ առավել մոտ են բալանսավորված համակարգ ձևավորելուն, իսկ դատական համակարգին վերաբերող որոշումների կայացման գործընթացը ապակենտրոնացված դարձնելը՝ կենտրոնական դեր տալով դատական իշխանության ինքնակառավարման մարմին, առավել ընդունելի մոտեցում է դատական իշխանության անկախության համատեքստում:

Միևնույն ժամանակ, սակայն, նկատվում են խնդիրներ խորհրդարանական կառավարման մոդելի պարագայում Ազգային ժողովի կողմից որոշումների կայացման կարգի առնչությամբ: Մասնավորապես, Ազգային ժողովի իշխող ուժին դատական իշխանության մարմինների ձևավորման հարցում լայն հնարավորություն տալը, հատկապես Հայաստանի Հանրապետությունում առկա չկայացած քաղաքական համակարգում, ունակ է ավելի մեծ վնաս հասցնել պետական մարմիններին ու արտաքին ազդեցության ռիսկեր ստեղծել: Ինչը վերը ներկայացված օրինակներում գործում է ԲԴԽ ոչ դատավոր անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների և սահմանադրական այլ մարմինների ընտրությունների պարագայում:

Ստեղծված պայմաններում դատական իշխանության անկախության հիմնահարցերը կախված են մնում մի կողմից Սահմանադրությամբ և ներպետական կարգավորումներով Ազգային ժողովում որոշումների կայացման կարգից, մյուս կողմից՝ առհասարակ երկրի օրենսդիր և գործադիր մարմինների քաղաքական կայացվածության մակարդակից՝ ի ապահովումն խորհրդարանական անկախության և վերահսկողության արդյունավետության բարձր մակարդակի, ինչը կենթադրի և կպարտադրի վերջինիս կողմից կայացվող որոշումների և հետո նաև պետական այլ մարմինների ձևավորման առավել անկախ ընթացակարգ:

Ամփոփում

ՀՀ քաղաքական համակարգի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության էության, բովանդակության և գործառույթների, ինչպես նաև կոնկրետ ժամանակահատվածի խնդիրների միջև ըստ էության ուղղակի կապ չի եղել: Իսկ Սահմանադրության փոփոխությունները ուղղված են եղել կոնկրետ պահի իշխանությունների հարատևման նպատակին:

Ինչպես ներկայացվեց, ՀՀ-ում կառավարման կարգը բազմիցս ենթարկվել է փոփոխությունների: 1991 թվականի սահմանադրական օրենքների հիման վրա խորհրդային կառավարման ձևից անցում կատարվեց կառավարման հիբրիդային ձևի, որը ներառում էր ինչպես խորհրդային, այնպես էլ նախագահական և կիսանախագահական կառավարման մոդելներին բնորոշ տարրեր: 1995 թվականի Սահմանադրությամբ արդեն ընտրվեց նախագահակենտրոն կիսանախագահական կառավարման մոդելը: 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով զգալի փոխվեց նախագահի լիազորությունների շրջանակը՝ ընդլայնելով Ազգային ժողովի և Կառավարության իրավասությունների շրջանակը, ինչը հանգեցրեց կիսանախագահական կառավարման մոդելի: Իսկ ահա 2015 թվականի Սահմանադրական փոփոխություններով արդեն անցում կատարվեց խորհրդարանական կառավարման մոդելի, որը սակայն չարդարացրեց սպասվող ակնկալիքները:

Քննարկված բոլոր դեպքերում կառավարման համակարգը, սակայն, աչքի է ընկել անարդյունավետությամբ, խորհրդարանական փոքրամասնության դերի անտեսմամբ ու իշխանությունների տարանջատման և փոխզույգման սկզբունքների ապահովման իմիտացիայով, այդ թվում՝ դատական իշխանության նկատմամբ իշխանության մյուս ճյուղերի ինստիտուցիոնալ ազդեցությամբ:

Ակնհայտորեն, Հայաստանի Հանրապետության կառավարման պատմությունը աչքի է ընկնում նրանով, որ պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերը ձևավորվել և գտնվել են նույն քաղաքական ուժի ձեռքում, ինչը հանգեցրել է խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի գերիշխանության՝ նկատի ունենալով, որ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերին իրականում միավորում է միևնույն քաղաքական նպատակներ և առաջնահերթություններ ունեցող քաղաքական ուժը:

Հատկապես 2015 թ.-ի սահմանադրական փոփոխություններից հետո ձևավորված համակարգն ու քաղաքական իրականությունը վկայեցին, որ խորհրդարանական կառավարման պարագայում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից վտանգավոր է կառավարության և վարչապետի ձեռքում գործադիր իշխանության գործառույթների գերկենտրոնացումը, կայուն խորհրդարանական մեծամասնության առկայության դեպքում քաղաքական մեկ ուժի կողմից սահմանադրական

մարմինների, այդ թվում՝ դատական իշխանության մարմինների ընտրությունների մենաշնորհը, և նման պայմաններում գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության իրականացումը հնարավոր է ապահովել իրավական և քաղաքական համարժեք երաշխիքներով օժտված խորհրդարանական ընդդիմություն ունենալու պարագայում:

Յուրաքանչյուր պարագայում, արդյունավետ պետական կառավարում և ժողովրդավարության ամուր հիմքեր զցելու համար, պետք է կարևորվի ոչ թե սուսկ այս կամ այն մոդելի սահմանադրական ամրագրումը, այլ իրավունքի գերակայության ապահովումը, քաղաքական մշակույթի զարգացումը և առկա խնդիրներին համահունչ իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման երաշխիքների ամրագրումն ու պրակտիկայում ապահովումը, ինչի պարագայում միայն ընտրված կառավարման կարգը կարող է առավել արդյունավետորեն կյանքի կոչվել:

Առաջարկություններ

- Մինչև Սահմանադրական փոփոխությունների նախաձեռնումը իրականացնել համալիր փորձագիտական ուսումնասիրություն՝ անկախացումից ի վեր ՀՀ պետական կառավարման համակարգի դրական ու բացասական կողմերի, քաղաժ դասերի վերաբերյալ:
- Նմանապես, մինչև նոր փոփոխություններ նախաձեռնելը իրականացնել վերլուծություն այն մասին, թե Սահմանադրությամբ նախատեսված կարևոր պետական ինստիտուտները ինչպիսի բացթողումներ են ունեցել և կարող են ունենալ պետական գործունեության արդյունավետության բարձրացման վրա:
- Իրականացնել կառավարման կարգի, մոդելների ու վերջիններիս առանձնահատկությունների, ընտրված հնարավոր տեսակի վերաբերյալ պարզ ու մատչելի հանրային իրազեկող արշավներ ՀՀ ողջ տարածքում:
- Սահմանադրության հայեցակարգը մշակելիս առաջնային շեշտադրում կատարել ոչ թե ուղղակիորեն կառավարման կարգի կոնկրետ մոդելի վրա, այլ իշխանությունների տարանջատման ու զսպման արդյունավետ ու գործուն մեխանիզմ ձևավորելու վրա, դրանից ելնելով՝ սահմանել կառավարման մոդելը:
- Անկախ ընտրված կառավարման մոդելից, ներդնել մեխանիզմներ ու սահմանադրական երաշխիքներ, որոնք իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերին կզսպեն և կհավասարակշռեն այն դեպքում, երբ նույն քաղաքական ուժը ներկայացված է և օրենսդիր և գործադիր իշխանությունում՝ այդ կերպ ապահովելով սահմանադրական հավասարակշռվածությունը,
- Անկախ ընտրված կառավարման ձևից՝ ապահովել վերահսկողական և անվտանգության ոլորտում որոշիչ լիազորություններով օժտված ու ժողովրդի կողմից ուղղակի ընտրություններով ընտրված նախագահի ինստիտուտի ձևավորում: Ձուգահեռաբար, ներդնել խորհրդարանական վերահսկողության այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն անվտանգության ոլորտում իրավասություն ունեցող մարմինների՝ ինչպես նախագահի, այնպես էլ կառավարության մարմինների հաշվետվողականությունը խորհրդարանին:
- Անկախ ընտրված կառավարման ձևից՝ ապահովել դատական իշխանության մարմինների ընտրության և նշանակման արժանիքների վրա հիմնված մեխանիզմի առկայություն: Նմանապես, ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն կառավարող ուժի կողմից դատական ատյանների կամ դատական իշխանության մարմինների ներկայացուցիչների ընտրության մենաշնորհը, ինչպես նաև միանձնյա որոշման կայացման հնարավորությունը: